

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱ

Ա. Եվրոպայի սրտում

Իսահակյանը Շվեյցարիայից, որտեղ գտնվում էր 1900 թվականի մայիսից, Վիեննա հասավ 1901 թվականի փետրվարի 17-ին: Վիեննան բանաստեղծին լավ ծանոթ քաղաք էր, այն եղել էր Իսահակյանի համար Եվրոպայի նախադուռը, ուր նա ժամանել էր առաջին անգամ 1893 թվականի օգոստոսին՝ Հայոց վեհափառ հայրապետ Խրիմյան Հայրիկի հետ հանդիպելու մտադրությամբ: Անցել էր յոթ և կես տարի: Նա արդեն լավ գիտեր Եվրոպան: Եվ Վիեննան, որ դարասկզբի Եվրոպայի յուրահատուկ հոգևոր կենտրոնն էր դարձել, կարող էր մրցել Փարիզի հետ: Սա Շտրաուսի, Շնիցլերի, Կլիմտի, Բյոկլեի, Մունկի հայրենի քաղաքն էր: 1900 թվական Վիեննա, հասկացողությունը մի ամբողջ շրջան է կազմում արևմտաեվրոպական արվեստի պատմության մեջ: Վիեննան դարասկզբին ապրում էր յուրահատուկ մշակութային վերելք: Եվ Իսահակյանը ունեցավ եզակի հնարավորություն՝ խաղաղ ու պահպանողական Շվեյցարիայից հետո ընկղմվել լիաթեք ապրող, երաժշտասեր ու հախուռն Վիեննայի կյանքի մեջ: Վիեննան սահմանագիծն էր գերմանական և ֆրանսիական մշակույթների, ֆրանսիական իմպրեսիոնիզմի և գերմանական սիմվոլիզմի յուրատեսակ խառնուրդը: Իսահակյանին մշտապես հետաքրքրել է սիմվոլիստական արվեստը թե՛ գեղանկարչության, թե՛ գրականության մեջ: Սիմվոլիստ նկարիչների՝ Կլիմտի, Ֆլիքի, Մունկի գործերը, որոնք յուրովի մեկնաբանում էին կյանքի և մահվան, սիրո և արարումի հավերժական պրոբլեմները, շատ համահունչ էին Իսահակյանի խոհական պատկերացումներին: Վիեննան ոչ միայն կենտրոնն էր սիմվոլիստական ցուցահանդեսների, նորարարական երաժշտական համերգների, համարձակ ներկայացումների, այլև հենց սիմվոլիզմ հասկացողության հոմանիշն էր: Իսկ և իսկ Վիեննայի կյանքի հետաքրքիր, ծաղկունքի բուռն շրջանում էր եկել Իսահակյանը խիտ ու կանաչ այգիներով, հոյակապ տաճարներով ու հրապարակներով հարուստ այս հմայիչ քաղաքը:

1893-ին, երբ նա առաջին անգամ ոտք դրեց Վիեննայի Մխիթարյան միաբանության Մայր տաճարը, մի զարմանալի հպարտություն զգաց, որ Եվրոպայի այս ավանդական կենտրոնում հայությունն ունի իր հոգևոր օջախը, որի

շուրջը համախմբվում էր հայկական կյանքը: Մխիթարյան մայրավանքը զբաղվում էր հայագիտությամբ, պահպանում հին ձեռագրերը, հրատարակում նոր գրքեր: Այս ամենը մոտ ու հարազատ էին դարձնում Վիեննան բանաստեղծին: Եվ, իհարկե, միաբանության հայրերը, որոնցից մի քանիսի հետ ինքը ծանոթացել էր առաջին այցին, իսկ մյուսների հետ ստեղծվեցին սերտ հարաբերություններ վերջին այցի ժամանակ: Այդպես է եղել միշտ: Ուր էլ գտնվել է Իսահակյանը, առաջին հերթին փորձել է հարաբերություններ հաստատել հայրենակիցների հետ, իմանալ նրանց խնդիրներն ու վիճակը, հայության կյանքի պրոբլեմները: Եվ առավել սերտ են ստեղծվել այս կապերը հոգևոր թեմերի, հայոց եկեղեցիների հոգևորականների հետ:

Վիեննայի Մխիթարյան միաբանության սպասավորներից նա մտերմացել էր հայրեր Բառնաբաս Պիլեզիկյանի, Տաշյանի, Արիստակես Վարդանյանի, Թովմաս Կետիկյանի, Ներսես Ալիմյանի, Ավետիք Կոյլավյանի, Վարդան Մելիքստեղեկյանի հետ: Այս այցի ժամանակ նա առավել բարեկամացավ վանքի մատենադարանի պետ, ծանաչված բանասեր և հայագետ հայր Բառնաբաս Պիլեզիկյանի (1862-1919) հետ: Հայր Բառնաբասը գրականության սիրահար էր և իր հերթին անում էր ամեն ինչ, որպեսզի երիտասարդ բանաստեղծը Վիեննայում իրեն մենակ չգզար:

Եվ թեև բանաստեղծը Վիեննայում երկար չմնաց, ընդամենը երկու ամիս, բայց այդ ընթացքում նա աշխատեց շատ արդյունավետ. կատարում է թարգմանություններ, գրում մի շարք բանաստեղծություններ: 1901 թվականի «Դրոշակի» առաջին համարում լույս տեսավ Իսահակյանի «Գողթան քնարը, որ ազատության...» պոեմը՝ «Դաշնակցության տասնամյակին» ենթախորագրով («Գողթան քնարը...») վերնագիրը պարզապես պոեմի առաջին տողն է, որը «Հայդուկի երգեր» գրքում 1990 թ. տողերիս հեղինակը ներկայացրեց որպես պոեմի վերնագիր): Այդ հատվածը Իսահակյանի հղացմամբ մասը պիտի կազմեր «Մասըսա Մանուկը» անտիպ պոեմի:

Իսահակյանի հայրենասիրական գործերի շարքում պոեմն անտարակույս ունի իր ուրույն տեղը որպես բանահյուսական բնույթի ներդրող-երգ, թեպետ ինչ-որ առումով այն անավարտ երկի տպավորություն է թողնում:

Վիեննայում գտնվելու շրջանում 1901 թ., «Դրոշակ» ամսագրի փետրվարյան համարը տպագրում է Իսահակյանի թարգմանությամբ հունգար բանաստեղծ Ա. Կամպիոնի «Քաղցած գայլեր» բանաստեղծությունը: Մեր ձևակատարին այնքան համահունչ այս երկը այնքան էր գերել Իսահակյանին, որ նա ասես ոչ թե թարգմանություն է կատարել, այլ սեփական երկն է ստեղծել: Այս պատճառով էլ նա իր արածը անվանել էր ազատ թարգմանություն: Այս գործն իրոք շատ էր ծայրակցում բանաստեղծի դարասկզբի ընդհանուր տրամադրությանը: «Քաղցած գայլեր». այսպես են որակում Կամպիոնը և Իսահակ-

յանը թուրքին և քրդին, որոնք արյան ու թալանի ծարավ՝ ներխուժել են ուրիշի հողը: Սակայն ատելի թշնամուն արժանի հատուցում է սպասում.

Դո՛ւրս այստեղից, դո՛ւրս, թշնամիք,
Էլ մենք ձեզնից ահ չունենք.
Մեռնելու չէ մեր հայրենիք,
Արուն թափել մենք գիտենք:

Դո՛ւք, լրբերդ, զինված զենքով,
Իսկ մեր ձեռքին գերանդին,
Բայց կջարդենք մենք ամենքիդ,
Չեք դիմանա մեր ուժին:

Ցավոք, մենք ձեռքի տակ չունենք Իսահակյանի թարգմանության բնագիրը, որպեսզի ստույգ համեմատություններ անենք, բայց համարձակ կարող ենք ասել, որ հեղինակը շատ է այն հայկականացրել, մոտեցրել մեր խնդիրներին: Եվ թվում է, թե Ա. Կամպիոնը ոչ թե օտար, այլ հայ հեղինակ է, և երկն էլ ի սկզբանե գրված է հայերեն: Պատահական չէ, որ բանաստեղծության վերջում Իսահակյանը գրել է. «Ազատ փոխադրություն Հայ-Գուսանի»:

Նույն ժամանակ նա թարգմանում է 19-րդ դարի հունգարացի հեղինակ Գետա Գարդոնիի «Աստծու գլուխգործոցը» պատմվածքը: Գարդոնին ծանոթ անուն էր Իսահակյանին, որպես օսմանյան լծի դեմ մաջարների պայքարը պատկերող «Էգերի աստղերը» պատմական վեպի հեղինակ: Ժնկից ուղարկված այս թարգմանությունը տպագրվում է Թիֆլիսում («Տարազ», 1901, № 10): Սա մի գեղեցիկ նովել է, հիմքը վերցված Նոր Կտակարանի պատմություններից, ուր Հիսուսը ազդարարում է, թե Աստծո ստեղծած գլուխգործոցը մարդու սիրտն է՝ մի տեսակետ, որին այնքան մոտ էր Իսահակյանի պոեզիան:

Վիեննայում Իսահակյանը բնակարան է վարձում հետևյալ հասցեով Schellhamnergasse 14, Thur 7: 1901 թ. փետրվարի 19-ին այս հասցեն է նշված Ցյուրիխյան համալսարանի ընկեր Իվան Քեանդարյանից ստացած փոստային բացիկի վրա: Ցյուրիխի համալսարանում սովորելու շրջանում 1900 թ. հոկտեմբեր - 1901 թ. փետրվար, Իսահակյանն ունենում է մի քանի մոտ ընկեր-ընկերուհիներ՝ Իվան Քեանդարյանը, Ղարաբանդյանը, Ազատուհինն, Մաշուկը, Ջավոն, Լուսոն: Այս ցյուրիխյան ուսանողական շրջանի մասին է վկայում և Իսահակյանի ընկեր Արսեն Ամիրովի նամակը Ավետիքին՝ ուղղված Կիևից Ցյուրիխ (1900 թ. 23 հոկտեմբեր) հետևյալ հասցեով՝ Zurich, Herren Avetik Issahakian, Universitatstrasse № 29 III: Արսեն Ամիրովը 1900 թ. ամռանը Իսահակյանի հետ եղել է Ժնևում, Ֆրանսիայում, Ցյուրիխում: Նա գրում է.

«Ժնևում անցկացրած օրերս հիշեցի և մի տեսակ քաղցրություն զգացի: Հիշեցի ֆրանսիական գյուղում անցկացրած մեր երեք օրը, երբ մահձակալների վրա պառկած՝ «Կիլիկիան» ձեռներիս խոսում էինք... Շատ հետաքրքրվում եմ ձեր ուսանողական ժողովներով, ափսոս որ չէի կարող մնալ» (Ավ. Իսահակյանի ընտանիքի արխիվ, հետագայում՝ ԱԻԸԱ): Եվ թեև Իսահակյանի նամակներն Արսեն Ամիրովին չեն պահպանվել, սակայն վերջինիս մասին Իսահակյանը հետևյալն է գրել Ջավահիր Ներսիսյանին (Ցյուրիխից, դեկտեմբերի 2) ուղղված նամակում. «Չմոռանամ ասել, որ Արսենը նոր ինձ նամակ է գրել, և հայտնել էր, որ նրան նամակ չես գրում. գրիր, լավ տղա է Արսենը, դեռ լավ է, ո՞վ գիտե, գուցե նա էլ փոխվի...» (VI, 30):

Իվան Զեանդարյանը գրում էր Իսահակյանին 1901 թ. փետրվարի 17-ին Ֆրիբուրգից (Շվեյցարիա). «Ցյուրիխից գրած վերջին նամակդ ստանալով, երբ իմացա Վիեննա տեղափոխվելուդ մասին, շատ ուրախացա, ենթադրելով, որ այնտեղ պարապմունքներիդ մեջ դու քեզ լավ կզգաս: Հիշում եմ քո խոսքերը, որ ասում էիր թե Վիեննան լավ քաղաք էր և այլն, այսինքն ես նկատում էի քո մեջ մի ձգտում Վիեննա ընկնելու, այդ պատճառով էլ Ցյուրիխի վերջին նամակը ինձ ուրախացրեց» (ԱԻԸԱ, տպագրվում է առաջին անգամ):

Իսկ Արսեն Ամիրովի երկրորդ բացիկից՝ ուղարկված Վիեննա, 20 փետրվար 1901 թ., մենք իմանում ենք հետևյալը. «Ասում եմ օրերս ժնև ես եղել և շատ ես տխրում, սովորական տխրությունդ է, թե՛ նոր բան կա: Ջավոն սրտիցդ թռավ, թե դեռ այնտեղ է» (ԱԻԸԱ): Ժնևում և Ցյուրիխում եղած շրջանում Իսահակյանն իրոք շատ է մտերմանում Ջավահիր Ներսիսյանի հետ: Եվ թեև Արսեն Ամիրովը իր բացիկում այդ մասին ինչ-որ ենթադրություններ է անում, բնականաբար կարող է հարց ծագել, թե չի՞ եղել երիտասարդ ուսանողների, երիտասարդ դաշնակցականների միջև սիրահարության պատմություն: Մանավանդ որ և՛ Իսահակյանի, և՛ Ջավահիր Ներսիսյանի նամակները ծայր աստիճան անկեղծ են ու անմիջական, և նրանք հենց իրենք շատ բան բացահայտում են: Իհարկե, կարելի էր ենթադրել, որ միայնակ այս հեռավոր Ցյուրիխում, Շուշիկի սիրուց դժված, Իսահակյանը ահա գտել էր մի հոգի, մի վառ անհատականություն, որ մոտ ու հարազատ էր իրեն, և գուցեև հնարավոր էր, որ նրանց միջև սիրո զգացմունք ծագեր: Իսահակյանի նամակներից աներկաբայորեն երևում է, որ նրանք վտանգավոր արահետ են դուրս եկած եղել, և սակայն նույն նամակներում բանաստեղծը փորձում է դիմակայել (և երևում է՝ հաջողությամբ) գրոհող զգացմունքին, դեռևս Ցյուրիխից (1901, դեկտեմբերի 2) նա գրում է անկեղծաբար.

«Քեզ տարօրինակ կթվա այս, գուցեև (ավելի լավ է պարզ խոսել) կարծես, որ ես սիրահարված եմ քեզ, բայց դժբախտաբար, այդպես բան, այդպես զգացմունք չկա սրտումս դեպի քեզ... Դու ինձ թվում ես միայն քրոջ պես» (VI, 30):

Միաժամանակ Իսահակյանը լավ գիտակցում էր, թե ինքը ինչ է նշանակում Ջավոյի համար, և ինքը Ջավոյի առաջ բացում է իր սիրտը, այն աստիճան անկեղծ, որ երևի ուրիշ ոչ ոքի չվստահեր: 1901 թ. մարտի 11-ի Վիեննայի նամակից. «Իմ թանկագին Ջավահիր, ես տանջում եմ քեզ անշուշտ. ես այդ գիտեմ, որովհետև, եթե գիտեման, որ դու անտարբեր ես դեպի իմ տանջանքները, իհարկե որ ոչ մի տող նույնիսկ չեմ գրի, բայց ես չեմ ուզում քու սերը դեպի ինձ <ի> չարը գործադրել» (VI, 33): Եվ զարմանալի երևույթ, երբ Ջավահիրը կողքին չէ (բանաստեղծը Վիեննայում է կամ Վենետիկում, իսկ Ջավահիրը Ժնևում), նրա նամակներում զգացմունքը ավելի գերիշխող է դառնում, երբ չկա մոտիկության, ավելի միշտ՝ ներկայության գործոնը, Ջավահիրը հարգալից հեռավորության վրա է, Իսահակյանը կարծես ավելի համարձակ է դառնում, ավելի վճռական: Նրա ռոմանտիկ հոգին նամակում ծայր աստիճան անմիջական է արտահայտվում. «Ամռոռաց Ջավահիր... եթե լավի նշաններ նկատեցի մի քանի ամսվա ընթացքում, սրտիս ուրախությունից կրկնակի կլավանամ... Թե կամենեմ ու կթոնեմ. ի՞նչ էլ որ լինի ձեռքը կլինեմ մոտդ, Ժնև, ո՛ր որ լինես, իսկ եթե դրությունս մնա նույնը կամ դեպի ավելի վատը դարձավ, այն ժամանակ միշտ մնաս բարև...

Այժմ ես վախենում եմ, որ դու սիրահարվես վերաս և հետո շատ տանջվես. ինչքան կուզես ինձ սիրիր, ազատ ես, բայց սեր, սիրահարություն մտքեդ հեռու պահիր» (VI, 35):

Ավելին, Իսահակյանը օրհնում է Ջավահիրի ապագան. «Դու ծամփեղ գնա՛, և հետ մի նայիր. իմ անունը իսպառ մոռցիր... գնա՛ կյանք մտիր, ուրախացիր, վարդեր քաղե, սիրիր, համբույր տուր, համբույր առ, հուսավառ աչքերով նայիր ապագայիդ վերա... Նույնիսկ լավ կլինի, որ էլ չպատահենք իրար. շուտ գնա. և Վենեցիայով մի՛ արի. քեզ շատ եմ ուզում տեսնել, բայց և շատ եմ վախենում. օ՛հ, ինչքեր եմ գրում. դու որտեղի՞ց ինձ պատահեցար. օ՛հ, կորի գնա՛, գնա՛, հեռացիր...» (VI, 36-37):

Պատրանքային սիրավեպը այդպես էլ չկայացավ: Լինում է և այդպես, և Ջավահիր Ներսիսյանին ուղղված Իսահակյանի օրհնանքը՝ «Երթան բարև, երթան բարև, ուր որ լինես՝ արևդ կանաչ լինի... մաքուր սիրես, մաքուր սիրվիս», տեղ հասավ: Մի քանի տարի անց Ջավահիր Ներսիսյանը դարձավ Լևոն Շանթի կինը: Սակայն զուտ անձնական գործոնից զատ, Իսահակյանի նամակները շատ բան են ասում: Ինչպես խոստովանում է բանաստեղծը, 1901 թ. գարնանից մինչև տարվա վերջը նա հոգեկան ծանր վիճակի մեջ է եղել: Ըստ երևույթին, թե՛ Շուշիկի անբաժան սերը, թե՛ բանտարկությունն ու աքսորը, նյութական անբարենպաստ վիճակը թողել են իրենց ծանր նստվածքը, բացասաբար անդրադարձել բանաստեղծի նյարդային սխտենի վրա: Այս ոչ հեռու անցյալի կորուստներն ու ապրումները իրենցն արել էին և մի տևական

ժամանակ բանաստեղծի առանց այն էլ գերզգայուն ներաշխարհը հասցրել հոգեկան հյուսման: «Բանաստեղծների ներվերը անպաշտպան են, բաց... Եվ ահա թե ինչո՞ւ նրանք բոլորից խորն են ու շատ են զգում: Հայնեն, Կարծեն, մի այդպիսի միտք է ասել» (<., 274), - գրում է Իսահակյանը այդ շրջանում (1900, դեկտեմբերի 16) Ցյուրիխում «Հիշատակարանում»:

Հիրավի ոչ բարենպաստ ազդեցություն ուներ նաև այն հանգամանքը, որ Իսահակյանը շուրջ ինն ամիս հեռու էր հայրենի երկրից, իր սիրած մորից, հարազատներից, ընկերներից: Եվ մենք Ջավդյին ուղղված հենց առաջին նամակից զգում ենք նրա անթաքույց հայրենաբաղձությունը, հոգեկան անհամատեղելիությունը Եվրոպայի հետ, նրա խոր կարոտը հայրենի եզերքի հանդեպ: Ահա թե ինչ է գրում Ջեղազույն Շվեյցարիայի ցյուրիխյան համալսարանի ուսանողը. «Ձանձրացել եմ Եվրոպայից, ու շատ եմ կարոտացել մեր կողմերին, մորս, քրոջս, հարսներիս, երեխանցը, մանավանդ մեր սազանդարներին և գյուղացոց. չնայելով որ հիմա լավ եմ պարապում, բայց այդ չի ոգևորում ինձ. թե ինչո՞ւ եկա Եվրոպա՝ այդ նպատակը այնքան ուժեղ չէ, որքան այն, որ ծիով մի գյուղից անցնեի, և վրես շները հաչեին, ու մի դռնից էլ մի սառը ջուր խնդրեի, և հայ աղջիկը ինձ ջուր տար: ...Ես հայ ժողովրդից հեռու չեմ կարող ապրել: Երազումս միշտ թառի ձեներ եմ լսում, և շատ ուրախանում եմ, երբ գիշեր է գալիս. քնել ու հայրենիքի կարմիր, սիրուն երազները տեսնել...» (VI, 30-31):

Եվ հենց այս զգացումը, այս կարոտը կուղեկցի Իսահակյանին ողջ կյանքի ընթացքում, կյանքի, որի մի պատկառելի մասը, ավաղ, անցավ օտար երկնքի տակ:

Ինչպես ասացինք, ոչ երկրորդական դեր ուներ Իսահակյանի հոգեվիճակի համար Շուշիկն ու անբաժան սիրո պատմությունը: Սա այն վերքն էր, որ դեռ երկար պիտի իրեն զգացնել տար: Ցյուրիխում 1900 թվականի աշնանը նա գրում է մի բանաստեղծություն, որն ամբողջովին ողողված էր 1893-ի օգոստոսին Շուշիկի ուխտադրժության վերհուշով.

Այսօր ձեր տուն մեծ խնջույք կա.

Դու կը բուրես վարդի պես.

Չորս բոլորող հարուստ տղա,

Դու կը փայլես աստղի պես:

Ձեր տան առաջ՝ ծյուն ու գիշեր,

Ա՛խ, ես կանգնել կը դողամ.

Դու դահճի պես ա՛լ ես հագել,-

Ալըդ շողքն է իմ արյան...

Ասես չեն անցել 8 տարիներ, ասես «ամռան մի գիշերվա» հարսանիքը երեկ է եղել՝ այնքան ամեն ինչը թարմ էր և խոցելի:

Իսկ քիչ անց Ցյուրիխ է հասնում Շուշիկի հորաքրոջ՝ Գայանե Մատակյանի մահվան լուրը. «Մի երկու օր առաջ, ինքնաբերաբար, առանց առիթի, առանց մի բացորոշ ասոցիացիայի, հիշեցի տիկ. Գայանե Մատակյանին... և որ նա ինձ բավական մեծ հարված հասցրեց, իսկ այսօր (17/4, հոկտեմբեր, 1900) Ցյուրիխում կարդացի նրա մահվան լուրը... Ես մտածել եմ ուղիղ նրա մեռած ժամանակին, գուցե հենց մեռած ժամին... Օ՛, սպիրիտիզմ, գաղտնի կապ...» (<, 272): Եվ ինչպես կվկայեն «Հիշատակարանի» ավելի ուշ շրջանի գրառումները, Շուշիկի անունը դեռ երկար ժամանակ չանցնող սպիի մնամ կմնա բանաստեղծի սրտում:

1900 թ. դեկտեմբերի վերջերին Իսահակյանը մամակ է ստանում իր հին ընկեր, ՀՅԴ անդամ Վահանից (ցավոք ազգանունը հայտնի չէ - Ա. Ի.): Վահանի մամակի առաջին տողերը չէին կարող չհուզել Իսահակյանին. (1900, 13/XII) «Նախ հարցերիդ պատասխանմ: Շուշիկը Բաքվում է՝ մարդու մոտը. գիտնս, Ավետիք, թվում է ինձ, որ նա քեզ այժմ շատ կարոտել ու սիրում է, իսկ եթե հարցնես - ինչի՞ց գիտես, ես քեզ կասեմ - որ զգում եմ միայն» (ԱԻԸԱ):

Ուրեմն Իսահակյանը իր մամակում հետաքրքրվել է Շուշանիկով, իսկ թե ինչից ելնելով է Վահանը արել իր եզրակացությունը, դժվար է կռահել, չէ՞ որ ասում են՝ «Առանց կրակի ծուխ չի լինում»:

Մեկ ուրիշ պատճառ էլ կար, որ փոթորկում էր բանաստեղծի հոգեկան աշխարհը: Դա մեծ համձարին հատուկ ստեղծագործ անհատի անբավարարությունն էր իր արածով, այն կատարելագործելու մշտական տենչանքը. «Իմ ուղեղս վառված է հազար ու մի արևներով,- գրում է նա Ջավահիր Ներսիսյանին,- և այդ է պատճառը, որ այրվում եմ ես... Ես պիտի գնամ իմ ծանապարհով՝ բեռնավորված համաշխարհային վշտի ծանրությամբ. ա՛յդ բաժին ընկավ ինձ: «Մի վիշտը հազար ուրախություն արժե» - ասում է Դանթեն. և ես կտանեմ իմ վիշտը» (VI, 32):

Որոշակի կոնֆլիկտ էր եղել Իսահակյանի և իր ընտանիքի, մանավանդ ավագ եղբայրների միջև, որոնք հոր՝ Սահակ աղայի մահից հետո դեկավարում էին տնտեսությունը և որպես խնամակալ հանդես գալիս առևտրից ու ֆինանսներից հեռու կանգնած բանաստեղծ եղբոր հանդեպ: Իսահակյանը յուրօրինակ «սպիտակ ագռավ» էր իր շրջապատում: Բացի այն, որ եղբայրները (բացի Մկրտչից) շարունակաբար նվազեցնում էին «ուսման գնացած» կրտսեր եղբորը հասնող գումարի մասը, պահում էին նրան կախյալ վիճակում, էապես չէին ըմբռնում նրա մարդկային խառնվածքը, ի գորու չէին արժեքավորել նրա տաղանդը, որ իրապես ի վերուստ էր տրված: Չէի ասի անտարբերությունը, այլ զսպվածությունը և սառնությունը տեղին կլինեին բնութագրելու ըն-

տանիքի վերաբերմունքը կրտսեր որդու հանդեպ: Այ, օրինակ, Իսահակյանը շարունակաբար խնդրում է, որ իրեն ուղարկեն իր սիրելի մոր լուսանկարը, և վերջապես գրում է, որ ինքը պատրաստ է վճարելու լուսանկարչին տրվելիք գումարը, միայն թե կատարեն իր խնդրանքը: Եվ վերջապես Մկրտիչ եղբայրը ուղարկում է լուսանկարը և կից գրում. (1901, 1 հունվարի, Ալեքսպոլ) «Ապլան և մենք ասում ենք, որ պատկերի համար փող չդրկես, որ դու գրել էիր, դա լավ բան է: Մի՞թե այստեղ փող չկա կամ քեզ այդքան չէր հասնի (նկատի ունի ջաղացքից ստացվող Իսահակյանի հասույթը - Ա. Ի.), որ նկարվեր: Փող չը դրկես, այլ քեզ համար մխսիր. մենք քեզ դրկելու տեղը դու ես դրկում...» (ԱԻԸԱ):

Իսահակյանը գիտեր մեկ գործ՝ դա բանաստեղծություն գրելն էր, լավ թե վատ՝ ամբողջ կյանքը զբաղվել է դրանով: Ինչպես էր դա ընկալվում եղբայրների կողմից, որոնց գործն էր այլուրի առևտուրը, միանշանակ դժվար է ասել: Բայց մի բան պարզ է, որ նրա և ընտանիքի միջև վաղուց արդեն անհամատեղելիություն կար, հոգեկանի և նյութականի աշխարհին վաղուց հայտնի անցնողաշնակությունը:

Ջավահիր Ներսիսյանին բանաստեղծը գրում է. «...չեմ կարող հաշտվել կյանքի հետ. կյանքը ինձ շարտում է դեմ, ես նրա խորթ որդին եմ, բայց կոչում եմ զգում մեջս, մարգարեի կոչում, և խոսք ունիմ ասելու» (VI, 34):

Ցյուրիխից Վիեննա մեկնելու ժամապարհին, Քեոթակ սահմանամերձ գյուղում էքսպրոմտով գրում է հետևյալ երկբառյակը.

Ոռնում է քամին
Խիստ բուք է հիմի.
Թո՛ղ իմ թշնամին
Անտուն չլինի:

Ձյունն եկավ, ծածկեց
Իմ ծամբեն անծեր.-
Որոնց սիրեցի,
Ինձ խորթ եմ դարձեր...

Հանրագումարն այս ամենի, մինչև հայրենիք վերադառնալը, եղան 1900-1901 թթ., եվրոպայում գրած մի շարք բանաստեղծությունները ողորդված հոռետեսական տրամադրություններով՝ «Սալմո ձորերում, կըմվի ձորերում...», «Օրըս տրտում, սև է անցնում...», «Իմ այրող վշտից սիրտըս է մաշվել...», «Արագին» և այլն:

Մկրտիչ եղբորից ստացած նամակից (1900, 8/30) մենք տեսնում ենք

դամնում, որ 1900-1901 թթ., Իսահակյանը իր բանաստեղծությունների մի հատոր է կազմել և հանձնել տպագրության ալեքսանդրապոլցի հրատարակիչ Գևորգ Սանոյանցին («Երգեր ու վերքերի» հրատարակչին):

Այն պետք է լիներ «Երգեր ու վերքերի» երկրորդ պրակը: Մկրտիչ եղբայրը գրում է այս խնդրի վերաբերյալ. «Սանոյանցը ասում է թե այս տարի գիրքը չեմ կարող տպել... Գալուղ հունվարին կտպեմ. չեմ էլ կրճատի. թող նորից ուտանավորներ ուղարկի, որ գիրքը լավ մեծ տեսք ունենա» (ԱԻԸԱ): Սակայն, մեզ անհայտ պատճառներով, այդ գիրքը չի հրատարակվում:

Ժնևում, Ցյուրիխում, ապա և Վիեննայում ու Վենետիկում գտնվելու ամիսներին Իսահակյանը չափածոյին զուգահեռ՝ լրջորեն զբաղվել է գեղարվեստական արձակով ևս: Այդ առթիվ «Հիշատակարանում» կարդում ենք հետևյալ ծրագրային գրառումը. «Ես գրելու եմ իմ ժողովրդի կյանքը ներկայացնող վեպերը, պատկերները մեր հեքիաթների ոճով, ոգով, ձևով. այդ է հայկական պրոզա - ձևը, դրանից պիտի զարգացնել մեր ժամանը: Գրել, գրել միայն ազգային ոգով, գրել հայկական, հայավար, հայնակ գրել: Ուսումնասիրել մեր հեքիաթներն ու երգերը (1900, դեկտեմբեր 16 Ցյուրիխ)» (<, 277):

Գուցես այս գրառումն անելիս նա երևակայել է ազգային ոգով պարուրված այնպիսի մի երկ, ինչպիսին պիտի լիներ «Ուստա Կարո» վեպը: Սակայն հարկ է ասել, որ դեռ արձակի ժամանակը չէր եկել. իր պատկերացրած էպոսատիպ վեպին նա դիմեց առավելապես 1909-1911 թվականներին: Իսկ ներկա տասնամյակը պոեզիայի տասնամյակ էր:

Թեհրանից Իսահակյանը մամակ է ստանում իր հին և սիրելի ընկեր Խորեն վարդապետից և, իհարկե, ուրախությամբ ընթերցում հետևյալ տողերը. «Հայ-գուսանի բանաստեղծությունները կարդալիս ոգևորվում եմ, սքանչելի են: Այս տեղերը մեծ ժողովրդականություն են գտել և ամենքը հետաքրքրվում են Հայ-գուսանով» (1900 թ., 7 օգոստոսի, Թեհրան) (ԱԻԸԱ):

Սա առաջին արձագանքներից է «Հայդուկի երգերի» վերաբերյալ: Արձագանքներ անշուշտ շատ ավելին կլինեին, եթե ընթերցողն իմանար, որ «Դրոշակ»-ում պարբերաբար հանդես եկող Հայ-գուսանը Ավետիք Իսահակյանն է:

Ժնևում 1900 թ. մայիսից մինչև տարեվերջ, շուրջ 8 ամիս Իսահակյանը շփվել է «Դրոշակի» խմբագիր Քրիստափոր Միքայելյանի հետ: Քրիստափորի հետ Իսահակյանը մտերմացել էր Թիֆլիսում 1898 թ. տարեսկզբին, երբ նոր էր ազատվել Երևանի բերդի մեկ տարվա կալանքից և մի քանի ամիս ազատ էր մինչև Օդեսա աքսորվելը: 1898-ի հունվար-փետրվար ամիսներին լինելով Թիֆլիսում, «ՀՅԴ» շրջաններում նա բազմիցս հանդիպում է մեծ հայրենասերի հետ: Սա մի շրջան էր, երբ Դաշնակցությունը պատրաստվում էր վճռորոշ գործողությունների, և կուսակցությունը որոշել էր ցարական մշտական հետապն-

դումից ազատելու համար ղեկավար մարմինը փոխադրել խաղաղ ու չեզոք Շվեյցարիա՝ ժնջադաշ: Այս ժամանակաշրջանի մասին Ավետիս Ահարոնյանը արժեքավոր վկայություններ է թողել իր «Դրոշակ»-ի հնոցին մեջ՝ գրութայն մեջ. «Պատրաստվում էի արտասահման անցնել բարձրագույն ուսում առնելու: Թիֆլիսում ընկա մեր բոլոր խոշոր հեղափոխական ղեկավարների մեջ ու պարզապես շշմած էի: Հիշում եմ, դեռ այն ատեն ինձ վրա ամենախորին տպավորություն, թողին Քրիստափորը և Սիմոնը: Ռոստոմը չկար: Քրիստափորը ծանոթանալով ինձ հետ ու իմանալով որ շուտով Չվիցերիա եմ գնալու, հույս հայտնեց, որ ես էլ կաշխատակցեմ «Դրոշակ»-ին՝ երբ տեղ հասնեմ: Ակնոցների վրայից նայող այդ գունատ ու խորհրդավոր մարդը ինձ խռովում էր: Ջգում էի, որ արտասահմանում նա ինձ հանգիստ չի տալու:

- Ժընև՝ գնա,- ասաց, կրկին նայելով ակնոցների վերից,- Ժընև շատ հարմար տեղ է ուսանելու...

Հասկացա նպատակը - «Դրոշակ»-ի խմբագրատունն այնտեղ էր»¹:

Դարակցքին Քրիստափոր Միքայելյանի շուրջ «Դրոշակի» խմբագրությունում հավաքվել էին ՀՅԴ ազդեցիկ գործիչներ, տաղանդավոր գրողներ և հրապարակախոսներ՝ Սիմոն Չավարյանը, Ավետիս Ահարոնյանը (որը «Դրոշակի» մեջ հանդես էր գալիս «Ղարիբ» կեղծանունով), Խաչատուր Մալումյանը, Մույս ինքը՝ Է. Ակնունին, Միքայել Հովհաննիսյանը (Միքայել Վարանդյան), Արտաշես Հովսեփյանը (Մալխաս), Ղազարոս Ղազարոսյանը (Մարգալետ), Մինասյան Սարգիսը (Արամ-Աշոտ), Օննիկ Նկրուզը, Սիամանթոն և բնականաբար Ավետիք Իսահակյանը:

Մեր ազգային մեծ գրողներից երեքը՝ Ավետիս Ահարոնյանը, Սիամանթոն, Ավետիք Իսահակյանը, աշխատակցել են «Դրոշակ»-ին: Ավ. Ահարոնյանը իր «Ազատության ժանապարհին» նշանավոր շարքի առաջին պատմվածքը՝ «Խայը», տպագրում է «Դրոշակ»-ում 1899 թ. փետրվարի 28-ին, իսկ վերջինը՝ «Հագրեն»՝ 1905 թ. հոկտեմբերին:

Իսկ Սիամանթոն... Խոսքը տանք Ավետիս Ահարոնյանին. «Երբ Ժընև հայտնվեց Սիամանթոն, նա ևս իր խղական ու համձարեղ երկերը, զարհուրանքով, ցավով ու ցասումով զանգված իր ահավոր տեսիլքները՝ Քրիստափորի սիրոյմ «Դրոշակ»-ին տրամադրեց»:

Խորեն վարդապետի նամակում (1900, 7 օգոստոսի) հիշատակվող Հայ-գուսանի տպագրված երկերը «Դրոշակում» հիշյալ ժամանակաշրջանում դեռ ինն էին: Սակայն նրանց մեջ էին այնպիսի բանաստեղծություններ, որ իրավամբ կարող էին մտնել հայ պոեզիայի «ոսկե ֆոնդը» - «Ազիզ մերիկ, քեզի թողի...», «Գլուզլալով ջուր է իջնում...», «Ինձ տեղ տվեք, Սիփան սնա-

1 Ավ. Ահարոնյան, «Դրոշակ»-ի հնոցին մեջ: Պատմագրություն ՀՅԴ, Բ հատոր, Աթենք, 1991, էջ 266-267:

րեր...», «Սալմո ծորերում, կըռվի ծորերում...», «է՛յ, ջան, հայրենիք, ինչքան սիրուն ես...»:

Այնպես որ, թեև հեռու հայրենիքից, սակայն այնպիսի երկեր էին ստեղծվել, որ նոր որակ էին բերում ողջ հայ հայրենասիրական պոեզիային, և առաջին անգամն էր պոեզիան այսպես անմիջականորեն կապվում ֆիդայական շարժման հետ:

Մեզ համար այսօր դժվար է ստույգ կռահել, թե ինչո՞ւ Իսահակյանը թողեց ուսումը Ցյուրիխի համալսարանում, հեռացավ Շվեյցարիայից, ապա որոշ ժամանակ մնալով Վենետիկում, 1901 թ, ամռանը վերադարձավ հայրենիք:

Մենք ունենք մի քանի բացատրություններ: Նախ՝ ֆինանսական դժվարությունները: Ինչպես նախկինում՝ Լայպցիգի համալսարանում սովորելիս, այնպես էլ Ցյուրիխում, ընտանիքը մշտական դրամական ծնշման տակ էր պահում Իսահակյանին: Մինչդեռ պետք էին զգալի գումարներ թե՛ ուսման վարձը տալու, թե՛ ապրելու համար Ցյուրիխի պես թանկ քաղաքում: Այդ գումարները չկային, ավելի ժիշտ՝ ցանկություն չկար վճարել եղբոր ուսման համար: Երկրորդ. գուցեև այդ գումարները գտնվեին (քանզի 1900 թ. Իսահակյանն արդեն անուն հանած և սիրված բանաստեղծ էր), եթե ինքը փողո-ինչ զսպեր ինքնասիրությունը և դիմեր հայ մեկենասներին: Սակայն եկել էր պահը, երբ Իսահակյանն զգում էր, որ ինքը այլևս կարիք չունի շարունակելու ուսումը: Այն, ինչ թվում էր, թե բաց է մնացել, չէր հավաքվել անհրաժեշտ չափով, չէր կազմում այն վճարող որակը, որ նա, ինչպես ժամանակին Լայպցիգում, նստեր օրն ի բուն և ուշի-ուշով գիտելիքներ ձեռք բերեր: Իհարկե, մարդ արարածը գիտելիքներ է ձեռք բերում ամբողջ կյանքի ընթացքում (լավագույն ապացույցը հենց Իսահակյանի «Սոկրատեսը» չափածո լեզբենդն է), բայց հատուկ դասախոսությունների հաճախելու կարիք երևի թե արդեն չկար:

Այժմ նա զգում էր, որ կարիք ունի ավելի լայն ծանաչելու Եվրոպան, ժամանակակից մշակույթը, կյանքը, ծանոթանալու հայության և եվրոպական մշակույթի հայտնի դեմքերի հետ: Այլևս իմաստ չուներ ամփոփվել համալսարանական պատերի ներքո, ժամն էր ծանաչելու կյանքի համալսարանները: Այն քաղաքները, որոնք կալեդոնոսկոպի պես փոխվում էին բանաստեղծի առջև՝ ժնև, Ցյուրիխ, Լոզան, Վիեննա, Փարիզ, Վենետիկ, Ռավեննա, յուրաքանչյուրը եվրոպական մշակույթի մի բեկոր էր, յուրաքանչյուրն աշխարհի գրական քարտեզի վառ անվանում էր: Արդեն իսկ կյանքը, շփումները այս քաղաքներում հղկում, բյուրեղացնում էին արվեստագետի հոգին: Իսահակյանը չէր եղել Եվրոպայում 1895 թվականից ի վեր՝ լայպցիգյան համալսարանական շրջանից հետո: Եվ, իհարկե, նոր դարը շատ փոփոխություններ էր մտցրել Եվրոպայի կյանքում: Եվ անգամ չթաքցված հակումը, անհազ ցանկությունը՝ որքան կարելի է շատ բան տեսնել, ծանաչել, ծանփորդել, լինել միշտ ծանփին, թափառումների մեջ:

վերջինս տիրական զգացմունք է դառնում Իսահակյանի համար: Այդպիսին էր նա, դա էր նրա բնությունը: Երբեմն տողերիս հեղինակին թվում է, թե բանաստեղծն իրեն առավել երջանիկ է զգացել ժամփորդելիս, աշխարհի մեծ ու փոքր ժամփաների վրա: Եվ ժամփաների ու թափառումների փիլիսոփայությունը մեծ տեղ է զբաղեցնում նրա խոհական աշխարհում: Նա մեր մեծ բանաստեղծներից և՛ ամենաշատ ժամփա անցածը, և՛ աշխարհ տեսածն է, բայց էլի ձգտել է ժամփա անցնել, դրա մեջ ևս տեսնելով իր կոչումը: 1900 թ. մայիսից մինչև 1901 թ. հուլիսը այնքան է հասցեները փոխել Իսահակյանը, այնքան է շրջագալել, որ իրոք կարող ես զարմանալ նրա եռանդի, ժամփա ելնելու սիրո վրա:

Բնորոշելով նրա մարդկային խառնվածքի այս էական հատկանիշը, տեղին կլիներ ընդգծել ժամփա ելած բանաստեղծի գրական նախասիրությունները՝ օրագիր, մանրապատում, ծոցատետրային նոթեր, խտացումներ և նամակներ: Այս բնույթի ինքնագրերը մշտապես առկա էին նրա ուղևորական ժամպրուկներում: Ելնելով այն դատողությունից՝ «Եթե նամակներ շատ ես ստանում, ուրեմն նամակներ շատ ես գրում», մենք կարող ենք վկայել, որ Իսահակյանն իրոք հարգանք է տածել նամակի հանդեպ: Ուրիշ ինչպե՞ս որակես այն հանգամանքը, որ բանաստեղծն իր արխիվում պահել է թե՛ ամենավաղ էջմիածինյան ծննդաբանական, թե՛ լայացիզյան և թե՛ ցյուրիխյան համալսարաններում ուսման շրջանում ստացած նամակները: Ծշմարտության դեմ մեղանշած կլինեմք, եթե չասենք, որ ստացած յուրաքանչյուր նամակ Իսահակյանը սրբությամբ պահել է: Նշանակություն է տվել յուրաքանչյուր նամակագրի և աշխատել ոչ մի նամակ անպատասխան չթողնել: Երանի թե Իսահակյանի բոլոր հասցեատերերն էլ այդպիսի վերաբերմունք ունեցած լինեին նամակների հանդեպ:

Նամակն իրապես չզոցվող պատուհան է անցյալի և անցյալի մեծ ու փոքր, նշանակալից ու ոչ նշանակալից դեպքերի հանդեպ: Այն մարդկային պատմությունների մի համրագումար է, մարդկային դեմքերի վառ կամ խամրող ցուցահանդես:

Գիտական կենսագրության բնույթը այնպիսին է, որ ակնածանքով պետք է մոտենալ գրողի ձեռքի տակից դուրս եկած յուրաքանչյուր ձեռագրի կամ փաստաթղթի, առավել ևս հեղինակի գրած կամ ստացած յուրաքանչյուր նամակի: Եվ, միաժամանակ, կենսագիրը չի կարող գոնե մտովի չարտահայտել իր երախտագիտությունը մեծ անհատին, որն այսպիսի գուրգուրանքով ու սիրով է պահել իրեն գրած նամակները, դրանով իսկ հարգելով հիշատակը այն մարդկանց, ովքեր երբևէ իրեն գրել են:

Իսկ այդ մարդիկ իսկապես որ արժանի էին հիշատակի. լինի դա Քրիստափոր Միքայելյանը, Նիկոլ Աղբալյանը, Հովհաննես Թումանյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Մարտիրոս Սարյանը, Լևոն Շանթը, Սիմոն Վրացյանը թե՛ ծննդաբանական ու համալսարանական ընկերները, տնեցիք ու հարազատները:

Ահա մեր առջև է Ալեքսանդրապոլից (1900 թ. նոյեմբերի 4-ին) ստացած նամակը հայրական տնից. նույն թերթիկների վրա գրել էին Մկրտիչ եղբայրը, Գևորգ եղբոր ավագ որդին՝ Հովհաննեսը (Օլիկը), Փեփրոնե քրոջ ամուսինը՝ Հարություն քահանա Աֆրիկյանը: Մաքուր, սրտառու նամակ է, կարոտով համակված: Նամակի աջ անկյունում բանաստեղծը սև թանաքով գրել է. «Ստացա 3 դեկտեմբեր / 20 նոյեմբեր, Ցյուրիխ, և լացի. երեք տարի կար, որ չէի լացել. օ՛, կարող եմ լա՛լ... լալ»: Ուրեմն չէր լացել բանտում, օդեսյան աքսորում, և հիմա տնից եկած մի համեստ խաբրիկի առջև լալիս է: Սա է Իսահակյանը:

Տարբեր տարիներ բանաստեղծը նամակագրական կապ է ունեցել իր վաղեմի ընկերների հետ: Այդ նամակագրության շնորհիվ շատ անհայտ էջեր են բացահայտվում Իսահակյանի կյանքից, քանզի շատ դեպքերում նամակն է հանդիսանում այն միակ աղբյուրը, որը լույս է սփռում անցյալի իրադարձությունների վրա: Նամակը գծում է նաև մեծ անհատի բազում ծանփորդությունների, ուղևորությունների քարտեզը՝ օտար ափերում անցկացրած կյանքի տարեգրությունը: Այն ոչ երկարատև ժամանակահատվածին, երբ Ցյուրիխի համալսարանի ազատ ունկնդիրը՝ «Դրոշակի» Հայ-գուսանը, յուրովի «նվաճում է» արևմտյան մայրաքաղաքները, եկավ ժնկից Վիեննա և ապա, հայրենիք մեկնելուց առաջ, որոշեց տեսնել Վենետիկն ու Սուրբ Ղազարի մեծ ձգնավորին՝ Ղևոնդ Ալիշանին, մի պահ դադար է տալիս ու գրում «Իմ ուղին» բանաստեղծական խոստովանությունը: Այդ բանաստեղծությունն առաջինը տպագրում է Արշակ Չոպանյանը «Ամսիտ» ամսագրում (Փարիզ, 1900, № 9-11): Այս երկն ասես դուրս է ընկնում Իսահակյանի բանաստեղծության ընդհանուր շարքից, այն հեռու է քնարական զեղումներից և ընդգծված ծրագրային իմաստ ունի: Բանաստեղծությունը թեև մատնանշում է Իսահակյանի ծայր աստիճան լարված հոգեկան վիճակը, նյարդերի պրկումը, բայց և այնպես արգասիքն է Իսահակյանի զորեղ կամքի: Մենք ուղղակիորեն զգում ենք երիտասարդի անբեկանելի տենչը՝ հասնելու իր նպատակին: Եվ ոչ մի մարդ ի զորու չէ խոչընդոտելու պոետին: Այս երկում ևս զգացվում է Իսահակյանին մշտապես հարազատ Նիցշեի ոգին.

Եվ անվախ, հրպարտ, գըլուխըս բարձր,
Սըլաքից արագ ես պիտի թռնեմ,
Ամբոխի վրայով պիտի թռնեմ ես,
Դեպի նըպատակս, միշտ հեռո՛ւն, հեռո՛ւն...
Եվ իմ հոգուս ժանտ թույնովը դաժան
Ես պիտի խայթեմ և պիտի խոցեմ,
Ախոյաններիս խոցեմ պիտի ես...

Նիցշեական դաժանությունը գալիս, խառնվում է իսահակյանական նպատակասլացությանը և վճռականությանը: Այդ երբ էր, որ քնարերգու Իսահակյանը իրեն համեմատեր օձի հետ: Հիրավի սա եզակի մետաֆորիկ պատկեր է Իսահակյանի պոեզիայում, որն անշուշտ նրա հոգեկան վիճակի ուղղակի արձագանքն էր: Բանաստեղծության եզրափակիչ մասը՝ ապագայի հանդեպ լուսավոր հավատը, մենք կարող ենք համարել զուտ իսահակյանական զինանոցի արդյունք:

Օ'հ, զընա՛, սլացիր, հըպարտ ու վըսեմ,
Դու իմ ի՛ժ ոգի,
Դըժնդակ ծամփովդ գալարվի՛ր առաջ,
Վեհության ուխտի սե՛գ ծանապարհորդ,
Մենիկ ուղիովդ սըլացիր հեռո՛ւ,
Դու ազատության ասպետ-մարգարե,
Գնա՛ հեռու, հեռու, ուր միտք չի հասնու՛մ,
Ուր մեծ ապագան լազվարթ, աստղագարո՛ղ
Քեզ իրան քաշում, իրան է կանչում:

Այո, այս երկը շատ բնորոշ էր 1900-1901 թվականների Իսահակյանի մտածողությանը և մանավանդ բանաստեղծի մարտական տրամադրությանը:

Այդ ժամանակահատվածում Իսահակյանը թե՛ Պետերբուրգի կայսերական համալսարանի հայ ուսանողների (Ա. Կարապետյան և ուրիշներ) և թե՛ Մոսկվայի հայ ուսանողների կողմից (Գևորգ Խատիսյան, Լ. Նազարյան) համարյա թե նույն բովանդակության երկու նամակ է ստանում: Ուսանողները ծրագրել էին հրապարակել ժամանակակից հայ պոեզիայի ժողովածուներ և դիմում էին Իսահակյանին «ուղարկել մի ինքնուրույն գրվածք»: Ինչ խոսք, որ նման նամակները օտարության մեջ գտնվող բանաստեղծին ոգևորում էին և գոտեպնդում: Իսահակյանն այդ շրջանում դեռևս մեկ գիրք էր հրատարակել՝ «Երգեր ու վերքերը», և իր բանաստեղծական անվան տարածման համար պարտական էր հայ պարբերական մամուլին և, առաջին հերթին, «Մուրժին» ու «Դրոշակին»: Սկսած 1898 թ., «Մուրժ» ամսագիրը մինչև փակվելը (1907 թ.) համարյա ամեն ամիս տպագրում էր Իսահակյանի նոր բանաստեղծությունները: «Մուրժի» խմբագիր Ավետիք Արասխանյանին հաջողվել էր հսկայական ջանքերի շնորհիվ ստեղծել արևելաօսյա թերևս լավագույն գրական և քաղաքական-հասարակական ամսագիրը: Եվ քանի թիֆլիսում գործում էր «Մուրժը», հայ գրողը կարող էր հանգիստ լինել, որ իր տաղանդավոր ստեղծագործությունը չէր կարող անտեսվել: Իսահակյանը մշտապես սիրով է համագործակցել Ավետիք Արասխանյանի հետ, վստահելով նրա անաչառությանը և գրական ծաշակին:

Իսկ Եվրոպայում «Դրոշակը» իհարկե բացառիկ դեր է խաղացել Իսահակյանի ծակատագրում, բայց և ինքը՝ Իսահակյանը, իր «Հայդուկի երգեր» շարքով մեծապես նպաստել է «Դրոշակի» անվան տարածմանը:

«Դրոշակից» հետո դարասկզբի արևմտահայ մամուլի Իսահակյանին մոտ պարբերականների թվում էր «Անահիտ» ամսագիրը:

Իսահակյանը, անշուշտ, հիշում էր ամսագրի խմբագիր Արշակ Չոպանյանի իրեն ուղղած (1899 թ. մայիսի 13, Փարիզ) նամակի տողերը. «Ես չափազանց սիրում եմ կոտնեմ Զեր բանաստեղծությունները: Թերևս ամենն ինքնատիպը, ամենն տաքն ու շնորհալիւն եք Կովկասի հայ բանաստեղծներուն... Ամեն պարագայի մեջ, Անահիտին մեջ հրատարակվելով, Զեր բանաստեղծությունները հայության ամեն հատվածներուն ծանոթ կդառնան, որովհետև այժմ «Անահիտը» տարածված է ամենուր, որ հայ կա»¹:

Իսկ 1899 թ. տարվա վերջի դեկտեմբերյան համարում Արշակ Չոպանյանը տպագրեց Իսահակյանի «Չանգը» («Եվ ես ապատում և անապատում...») բանաստեղծությունը, որը հետագայում վերանվանվեց «Տիեզերական Չանգ»:

Երբ Իսահակյանը Շվեյցարիայում էր՝ ժնևում, գրեթե ամեն օր հաճախում էր «Դրոշակի» խմբագրություն, որը Շվեյցարիայում գտնվող երիտասարդ հայ ուսանող-ուսանողուհիների սիրելի հավաքատեղին էր:

1900 թ. մայիսի 7-ին ժնևում տոնում են ՀՅԴ-ի և նրա մամուլ կենտրոնական օրգան «Դրոշակ» ամսագրի 10-ամյակը: Իսահակյանն այդ օրերին Ցյուրիխում էր, և նա շնորհավորական հեռագիր է ուղարկում ժնև՝ «Դրոշակի» խմբագրատան անունով: Հոբելյանի մասին Իսահակյանին պատմում է Լոզանից Ցյուրիխ գրած իր նամակում օրիորդ Ազատ Փախլավունին, որը բժշկագիտության ուսանողուհի էր և Իսահակյանի մոտ ընկերուհիներից: Օր. Ազատը գրում էր. «Զեր հավատը՝ դեպի Հայի ապագա բարվոք վիճակը, իմ նախանձն է զարթեցնում: Ասեք ի՞նչն է պատճառը Զեր այդ հավատի, կամ ասեցեք ինչպե՞ս, ի՞նչ միջոցով Դուք գտաք այդ նեցուկը: (Այս ասում եմ, հիմնվելով Զեր հեռագրի վրա, Դրոշակի 10-ամյակի առթիվ ուղարկած): Գնացել էի ժնև: Բավականին լավ անցավ 10-ամյակը, մանավանդ Քրիստափորն անմման խոսեց... (<1900> 15/IV)» (ԱԻԸԱ):

Այս նամակից մենք տեղյակ ենք դառնում, որ ինչ-ինչ պատճառներով (հավանական է համալսարանական ըննությունների) Իսահակյանը չի մասնակցել 1900 թ. մայիսին ժնևում անցկացված «Դրոշակի» 10-ամյակի երեկոյին: Սակայն նա իր սրտի խոյքն ասել էր իր «Գողթան ընարը, որ ազատության...» պոեմով, որն առաջին անգամ տպագրվեց «Դրոշակում»:

Հետևելով բանաստեղծի եվրոպական ուղևորության փուլերին, մենք միան-

1 Արշակ Չոպանյան, Նամականի, Երևան, «Սովետական գրող», 1980, էջ 57:

շանակ գալիս ենք այն եզրակացության, որ Իսահակյանը, լինելով ժնկուն, Ցյուրիխում թե վիեննայում, հիմնականում առնչվել է հայկական միջավայրի հետ: Դա ժնկուն «Դրոշակի» խմբագրությունն էր, Ցյուրիխում՝ հայ ուսանողության կենտրոնը, իսկ վիեննայում՝ Մխիթարյան միաբանությունը: Այս առաքելությունը եվրոպա 1900-1901 թթ. լրիվ էր լինի, եթե Իսահակյանը չայցելեր հայապահպանության թերևս ամենակարևոր կենտրոնը՝ Վենետիկ, Սուրբ Ղազար կղզում հանգրվանած Մխիթարյան միաբանություն: Այն եղավ ուղևորության վերջին կայանը: Այս այցին, այո, վերջինը, սակայն Իսահակյանի հետագա տարիների կյանքում Ադրիատիկի ծովածոցի այս անըջային քաղաքը տևական ժամանակ բախտորոշ դեր պիտի խաղար:

Վենետիկ մեկնելուց առաջ Վիեննայից Իսահակյանը գրում է իր վստահելի անձին՝ Զավահիր Ներսիսյանին (1901, մարտի 11): Ըստ երևույթին հոգեկան վերելքի պահին հեռավոր ժամփաների կանչը պարուրել էր նրան, խանդավառել ռոմանտիկ էությունը: Բանաստեղծի ծրագրերը ինքնին հրաշալի են և այնքան համահունչ նրա անսանձ երևակայությանը. «...միջոցներ ձեռք կառնեմ ոչ միայն Վենետիկ գնալու, այլև մինչև արևելք, Պաղեստին ժամփորդելու. պիտի Հիսուսի ման եկած վայրերը շրջեմ, պիտի Հորդանանի ջուրը խմեմ և երուսաղեմի դաշտերի շուշանը հոտոտեմ...» (VI, 34):

Բ. Իսահակյանի առաջին այցը Վենետիկ՝ Սուրբ Ղազար կղզի

«Ապրիլ ամսի սկզբներին, 1901 թվին, Վիեննայից մեկնում եմ Վենետիկ, թե՛ Մխիթարյանների վանքի՝ հայագիտությամբ հարուստ գրադարանից օգտվելու, և թե՛ Իտալիան եղածի չափ տեսնելու: Ուշ երեկոյան հասնում եմ Վենետիկ: Առավոտ վաղ ոտքի վրա եմ. ուզում եմ ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների վանքը:

Նետում եմ ինձ առաջին պատահած գոնդոլի վրա: Մի արևավառ օր է. սև գոնդոլը սև կարապի պես ներդաշնակ սահում է Մեծ կանալի կանաչ ջրերի վրայով: Սա կախարդական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ կիսում է Վենետիկը երկու մասի: Նրա աջ ու ձախ կողմերում շարքով կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանքները՝ երփներանգ մարմարիոնով, կառուցված վենետիկյան չքմաղ ոճով: Կարծես հեքիաթների միջով եմ գնում, այնքան անիրական, այնքան երևակայական են թվում այս բոլորը. սակայն ես հայացքս հառել եմ Լագունայի հեռուները, որոնում եմ Ս. Ղազարի կղզին... Դանդաղ է սահում գոնդոլը: Ես անհամբեր եմ, շտապեցնում եմ գոնդոլավարին: Մոտենում ենք կղզուն. անհագուրդ նայում եմ կանաչ նոժիների միջից երևացող կարմիր շենքերին. «Սուրբ Ղազարն է սա», - ասում եմ ինձ և կրկնում... Գոնդոլը կանգ է առնում: Սրտատրոփ ոտք եմ դնում այս պատմական, թանկարժեք հողի վրա» (V, 7, 8):

Սա բանաստեղծի կյանքում, իրոք, նվիրական պահ էր: Ինչպես ինքն է խոստովանել, «...պատանի հասակիցս երազել եմ տեսնել Վենետիկը, բայց մանավանդ Ս. Ղազարը» (V, 7): Հիրավի, էջմիածնում, Գևորգյան ձմեռարանում, երբ առաջին անգամ բանաստեղծի ձեռքն անցան Սուրբ Ղազարում տպագրված Մխիթարյան միաբանության գրքերը, որոնք իրավամբ կարող են համարվել հայատառ ամենագեղեցիկ և բարձր ճաշակով հրատարակված գրքերը, պատանու հայացքը գրքի էջերից սահեց դեպի ամեն հայի համար նվիրական, վենետիկյան ծովախորշի ալիքների ներքո մեղմ ժոժվող, Մխիթար Սեբաստացու ուխտավայր Սուրբ Ղազար կղզին:

Շատ չեն մեր հայրենի երկրից դուրս այն նվիրական վայրերը, որոնք իրավամբ կարող են համարվել հայի հոգին ջերմացնող և հայի ոգին բարձր պահող անուններ՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը, Մեծի Տանն Կիլիկիո Ամթիլիասի կաթողիկոսանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարը, Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքարանը, Հալեպի Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցին, Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Մոսկվայի Լազարյան ձմեռարանը, Գլենդելի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Վիեննայի Մխիթարյան միաբանության մայրավանքը և դրանց թվում առաջինների շարքում Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան մայրավանքը:

Իսահակյանը գիտեր, որ այս փոքրիկ կղզյակում, որի հայապատկանության կոնդակը հռչակել էր դեռևս ինքը՝ Նապոլեոն Բոնապարտը, մեծ լուսավորիչ Մխիթար Սեբաստացին հիմնել էր ուխտատեղին՝ դպրավանքով, գրադարանով և մի համեստ տպագրատոմով: Եվ ահա այդ կղզյակը, հայապահպանության այդ անմար մարտկոցը երեք դար շարունակ գործելով Եվրոպայի կենտրոնում, քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկի՝ Վենետիկի դիմաց, հայապահպանական մեծ առաքելություն է կատարել:

Երազանքներն իրականանում են, և 25 տարին մոր բոլորած բանաստեղծը ոտք է դնում այն հողակտորին, որը մինչ այդ, վենետիկյան լագունայի կապույտ ջրերի պես, իրեն միայն կապույտ տեսիլների մեջ է երևացել:

Բանաստեղծը վերհիշում է. «Ի՞նչ պատկառելի անուններ հնչում են ականջիս՝ Մխիթար Սեբաստացի, Ագոնց, Չամչյան, Ինժիճյան, Բագրատունի... Ինչքան մեծ երախտիք ունի Սուրբ Ղազարի միաբանությունը հայ գրականության, հայագիտության հանդեպ: Ի՞նչ հոյակապ գործեր՝ առաջին աշխարհաբար հայ գրականություն, Հայկազյան բառարան, Հայոց պատմություն, հին ձեռագիր մատյանների հրատարակություններ, կլասիկների թարգմանություններ» (V, 8):

Սուրբ Ղազար կղզին ժամանակին հատկացված է եղել բոլորտներին, հետո նրանց տեղափոխել են Ադրիատիկի մի այլ, ավելի հեռավոր կղզի և Սուրբ Ղազարը հանձնել են Մխիթար աբբահորը և նրա ուխտի հետևորդներ-

րին: Կղզում կանգնած է եղել դեռևս XV դարից աշտարակավոր տաճարը և նրան կից կացարանների շինությունները, որոնք չորս կողմից պատսպարում են գեղեցիկ այգի-ծաղկանոցը: Շինությունները սյունազարդ են, և պատրանք է ստեղծվում, թե մարդ գտնվում է մի միստիկ վայրում, ուր ժամանակը իրոք կանգ է առել:

Վանականները, ըստ ընդունված կարգի, բոլորն ապրում են այդ կղզում, նրանց թիվը նվազագույնը պետք է լինի 12 հոգի: Սուրբ Ղազարը կենտրոնն է հայ կաթողիկե հավատացյալների, և հայրերը սպասավորներն են աշխարհի բազում երկրներում գործող հայ կաթողիկե եկեղեցիների: Կղզին ունի իր փոքրիկ ձեմարանը՝ դպրոցով ու հանրակացարանով, ուր սովորում են շուրջ մեկ տասնյակ ապագա հոգևորականներ: Միաբանության հպարտությունն է կազմում Ձեռագրատունը, ուր պահպանվում է հայոց հին ձեռագրերի մի զորեղ հավաքածու, որը երևանի Մատենադարանից հետո երկրորդ տեղն է զբաղեցնում աշխարհում:

Դարեր շարունակ միաբանության հայրերը համայն եվրոպայում, Մերձավոր Արևելքի երկրներում հավաքել և աչքի լույսի պես պահպանել են հայոց հին ձեռագրերը, մագաղաթե մատյանները, հայ մանրանկարչական արվեստի եզակի կոթողները և հնագույն գրքերը: Ի՞նչ բարեբախտություն է եղել, որ արշավանքների ու պատերազմների, կրակների ու ավերածությունների տակ գտնվող մեր հայրենիքը ունեցել է աշխարհիս ամենագեղատեսիլ ու ապահով վայրերից մեկում մի հուսո ափ, որն իր գուրգուրանքի տակ է առել հայ ողբերգական պատմության վավերագիր մատյանները, մշակույթի մասունքները, հայ ձեռագիրն ու հայ գիրքը: Սակայն Սուրբ Ղազարը ոչ միայն մեծն Մխիթարի ուխտի պահպանման նվիրյալն է և մի եզակի թանգարան, այլև՝ գիտական կենտրոն, որն իրավամբ արժանացել է միջազգային ժամաչման՝ Մխիթարյան ակադեմիա անվան տակ:

Այդ Սուրբ Ղազարն է երեք դար շարունակ հրատարակել հայերեն լավագույն գրքերը և մեր մշակույթը հարստացրել Մխիթար Սեբաստացու Աստվածաշնչով, Հայկազյան լեզվի երկհատոր բառարանով, Վարք սրբոցով, Գիրք պիտոյիցով, Հայոց պատմության բազում հատորներով, Ալիշանի Հայոց աշխարհագրությունը ներկայացնող գրքերով, համաշխարհային դասականների հարյուրավոր լավագույն թարգմանություններով: Սուրբ Ղազար. այս երկու բառն է դրոշմված հայ գրքի փառքը կազմող հատորների վրա, որոնց ուսումնասիրությունը ներկայումս էլ հայ գիտնականների պատվի խնդիրն է: Իսկ իրենք՝ միաբանության հայրերը, ճշշող մասով գիտնական հայագետներ, գիտության բազում ժյուրերի, բայց առաջին հերթին հայագիտության և աստվածաբանության անձնվեր հետազոտողներ են, որոնք կերտել են հարյուրավոր հատորներ իրոք որ «մի նշխարով, մի կում ջրով»: Տարիներ և տարիներ՝ սահմանափակ-

ված փոքրիկ կղզու անձուկի մեջ, նրանք ծառայել են իրենց ազգին, հավատին և ծշմարտությանը: Սուրբ Ղազարը գիշերային Արկտուս աստղի պես դարերի խավարի ու թոհուրոհի մեջ լույս է պարզվել մեր ժողովրդին, եղել անդուլ մարտկոցը Վերածննդի ու Լուսավորության գաղափարների:

Օ՛ր, Իսահակյանը լավ գիտեր, թե ինչ հողի վրա էր ոտք դնում: Ըստ ընդունված կարգի, միաբաններից մեկը դիմավորում է նոր այցելուին՝ Իսահակյանին, և մի փոքր շրջագայություն անցկացնում Ս. Ղազարի նվիրական վայրերով: Այն էր՝ միաբանության տաճարը, մատենադարանը, թանգարանը, տպարանը, պարտեզը: Իսահակյանին այդ օրը դիմավորողը Եսայի վարդապետ Տայեցին էր, որին բանաստեղծը ծանաչում էր որպես «Անվավեր ավետարանների» հրատարակիչ: Ապա հայր Եսային Իսահակյանին ուղեկցում է հայրերի հյուրասենյակը, ուր նա ծանոթանում է միաբանության մի շարք պատկառելի անդամների հետ՝ հայրեր Վարդան Հացունի, Էփրիկյան, Սիմեոն Երեմյան: Սակայն Իսահակյանի երազանքն էր տեսնել հայր Ղևոնդ Ալիշանին՝ Սուրբ Ղազարի մեծ ձգնավորին, հայ մեծ բանաստեղծին և գիտնականին, «Նուագը», «Յուշիկը հայրենեաց հայոց», «Հայապատում», «Շիրակ. տեղագրություն պատկերացոյց», «Աշխարհագրություն քաղաքական», «Հայրուսակ», «Հայ Վեներտ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական» և բազմաթիվ այլ հրաշալի գրքերի հեղինակին՝ կենդանության օրոք լեզբնդ դարձած մի բացառիկ անհատականության: Եվ այսօր, այս նվիրական օրը երիտասարդ բանաստեղծը պիտի հանդիպեր «ամբողջ հայության սիրելի Ալիշանին»:

Հայր Սիմեոն Երեմյանը առաջնորդում է Իսահակյանին հայր Ալիշանի մոտ. «Մտնում ենք հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենյակ ծովահայաց լուսամուտով: Գրասեղանին հակած է մի ավերած փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ... և գրում է:

Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը, մի փոքր սեղանի վրա մի գրաֆինկա՝ ջրով լի, կողքին մի բաժակ: Եվ ուրիշ ոչինչ:

Ալիշանը բարձրացնում է գլուխը, խոշորացույց ակնոցների միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր:

Հուզմունքով համբուրում եմ ջլուտ ձեռքը, որ կերտել է այն պատկառելի հատորները:

- Ապրիք, զորանաք, ուրկե՛ կուգաք,- հարցնում է Ալիշանը տակավին ամուլգ ծայնով:

Հայր Սիմեոնը պատասխանում է իմ փոխարեն.

- Ուսանող է Վիեննայի, կովկասահայ է» (V, 9):

Իսահակյանը կղզու տպարանում գնել էր Ալիշանի մեծ լուսանկարը, և այժմ խնդրում է, որ բանաստեղծը իր ինքնագիրը թողնի նկարի վրա: Ալի-

շանը կատարում է այս խնդրանքը (երկար տարիներ Իսահակյանի գրքերի պահարանում պահվում էր այդ մասունքը):

Իսահակյանը մտորում է մեծ ձգնավորի կյանքի ուղու մասին. «Ավելի քան կես դար այս խուցում կամ մեծ խուցում, իր ողջ երիտասարդությունը, կքել է նա սեղանին, որի վրայով անցել են անթիվ գրքեր հին ու նոր լեզուներով, հայացքը Ադրիականի ոսկի ալիքներին և ականջը մշտամրմունջ ջրերին, և ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մոտ, սրտով մոտ, երգել է իր «Նվազ»-ները, երազելով հայրենիք, տիեզերք, ամհունություն, հավերժություն... Առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը... այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորը, շնչավորեց ավերակները, գզվեց, հիացավ նրանցով: Հայաստանը ո՛չ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ո՛չ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն» (V, 10-11):

Այս առաջին այցը Վենետիկ, Սուրբ Ղազար կղզի հավետ տպավորվեց Իսահակյանի հիշողության մեջ: Գրեթե կես դար անց, 1948 թվականին, նա Երևանում կգրի «Ղևոնդ Ալիշան» հուշապատումը՝ կերտված այնպիսի ջերմությամբ ու սիրով դեպի մեծ Նահապետը, դեպի Սուրբ Ղազարը, որ ընկալվում է ոչ թե որպես հուշ, այլ՝ մի ասք, մի ձոն: Երիտասարդ Իսահակյանը անձամբ ծանաչած մեծ վարպետներից երեք հոգու է առավել պաշտել՝ Խրիմյան Հայրիկ, Ղևոնդ Ալիշան, Քրիստափոր Միքայելյան:

1901 թ. մարտի 27-ին բանաստեղծը մի նամակ է հղում Վիեննա՝ հայր Բառնաբաս Պիլեզիկձյանին: Այն բավականին հարուստ ինֆորմացիա է տալիս Իսահակյանի ուղևորության և վենետիկյան կյանքի վերաբերյալ.

«Շատ հարգելի Հայր Սուրբ.

Անշուշտ զարմացած կլինեք, որ հանկարծ չերևցա. բայց դա այնպես անսպասելի եղավ, որ ես մինչև այժմ չեմ կարողացել ինձ հաշիվ տալ:

Ես վաղօրոք իրերս տարել էի կայարան՝ պահեստին, և սպասում էի> ժնկից բարեկամիս այն հուսով, որ պետք է նա մի երկու օր Վիեննայում մնա և կ'գանք Ձեզ մոտ, բայց նա ժամանակ չունենալով և ոչ մի ժամ մնալու, իսկ կարևոր խոսակցություններ ունենալով հետը՝ ես նրա հետ մի քանի կայարան (ստանցիոն) գնացի, և հետո բաժանվեցի ու շարունակեցի ծանապարհս դեպի Վենետիկ, հետ դառնալ դեպի Վիեննա թանգ կ'լիներ. չ'նայելով որ փափագում էի մնաս բարև ստել Ձեզ:

Ի՞նչպես հայտնեմ շնորհակալությունս դեպի Ձեզ, դեպի Ձեր բարությունն ու պատրաստակամությունն. ուղիղն ասած խոսքեր չեմ գտնում,- անչափ, անչափ շնորհակալ եմ Ձեզմից, արդյո՞ք պիտի կարողանամ ժամանակին ես ևս Ձեզ մի փոքր ծառայություն մատուցանել 'ի տրիտուր»:

Ինչպես երևում է Իսահակյանի շնորհակալական խոսքերից, հայր¹ Բառնաբասը Վիեննայում բանաստեղծի հանդեպ շատ հոգատար վերաբերմունք է դրսևորել, և Իսահակյանը խորապես ափսոսում է, որ չի կարողացել իրերի բերումով հավուր պատշաճի ցտեսություն ասել հայր Բառնաբասին: Բարեկամը, որի մասին գրում է Իսահակյանը, ըստ երևույթին նրա մորաքրոջ որդի Գեղամ Կոստանյանն է (Շուշիկի քեռի), որն այդ տարիներին ապրում էր Արևմտյան Եվրոպայում: Այնուհետև Իսահակյանը հակիրճ պատմում է Սուրբ Ղազարի միաբանության հայրերի իրեն ցույց տված ընդունելության մասին. «Ես այստեղ տեղավորվել եմ մի պանսիոնում: Այստեղի ս. հայրերը նույնպես ամեն հարմարություն տալիս են ինձ զբաղվելու: Վեներտիկ վերաս շատ լավ է ազդում, լավ է, խաղաղ. մի քիչ ավելի տաք է այդտեղի վերա, իսկ ծովի վրա գոնտուլով շրջելը՝ շատ և շատ ուրախացնում է ինձ»:

Հարկ է ասել, որ թե՛ Վիեննայի և թե՛ Վեներտիկի (Սուրբ Ղազարի) Մխիթարյան միաբանության հայրերը արտակարգ բարեխիղ և հոգատար վերաբերմունք են ցուցաբերել Իսահակյանի հանդեպ թե՛ իր այս առաջին այցին, երբ ինքը բոլորովին երիտասարդ ներկայացավ Հայրերին և հայ բանաստեղծության Նահապետ Ղևոնդ Ալիշանին, և թե՛ հետագայում տարագրության տարիներին:

Ինչ խոսք, որ հայր Բառնաբասը մենակ չէր: Հանձին Ավետիք Իսահակյանի նրանք տեսան երիտասարդ, բայց պատկառելի գրական վաստակ ունեցող հայրենամուկեր հեղինակի, մի ստեղծագործողի, որն արդեն ժողովրդական բանաստեղծի համբավ էր ձեռք բերել և որի առաջ բաց էին հայ բոլոր պարբերականների դմբերը՝ «Մուրճից» մինչև «Դրոշակ»: Հազիվ թե Իսահակյանը իրեն ներկայացրած լիներ, պատմած իր մասին, սակայն ընթերցասեր վեներտիկյան հայրերը հիանալի տեղյակ էին, թե ինչ է կատարվում հայրենի պառնասում, և գրքերի ու պարբերականների իրենց հսկայածավալ հավաքածուներում ունեին թե՛ «Երգեր ու վերքերի» անդրանիկ հատորը, թե՛ այն մամուլը, մամավանդ «Դրոշակը», ուր տպագրվում էր Իսահակյանը կեղծանունով: Այս մասին էլ է գրում նա հայր Բառնաբասին ուղղված իր մամակի վերջում. «Հայր Սուրբ. «Դրոշակում» ստորագրող Հայ-Գուսանը ես եմ, այս համարում մի երկար ոտանավոր ունեմ, կարդացեք և կարծիքդ հայտնեք ինձ:

Եթե մամակ և փող գա հասցեիս խնդրեմ ուղարկեցեք այստեղ այս հասցեով՝ Venise Calle Vallarosso N 1303, Pensione M.Venier A. Isaakian. Խնդրեմ Դուք էլ մեկ-մեկ մամակ գրեք»²:

1 Ի դեպ, Իսահակյանը չքմիածինյան սովորության համաձայն օգտագործում է Հայր Սուրբ բառակապակցությունը, մինչդեռ Մխիթարյան միաբանության հայրերին ընդունված է կոչել պարզապես Հայր և հետո տալ անունը:

2 Այս մամակի բնագիրը, ի թիվս Իսահակյանի մի շարք մամակների բնագրերի, պահպանվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրերի դիվանում: 1987 թ. մամակների քսերոպատմենները ինձ ուղարկել է Հայր Օգոստինոս Սեքուլյանը: Այս

Թեև Իսահակյանը «Դրոշակում» տպագրվում էր 1899 թ. հունվարից, սակայն նա վիեննայում այդ մասին չէր հայտնել հայերին և միայն նամակով է տեղեկացնում այդ փաստը: Ինչպես երևում է, Իսահակյանն ապրում էր ոչ թե Սուրբ Ղազար կղզում, այլ՝ Վենետիկ քաղաքում, M. Venier պանսիոնում, սակայն նա ամեն օր, որպես կանոն, արագընթաց մոտորային նավակով Վենետիկից գալիս էր Սուրբ Ղազար: Այս հայաշունչ կղզին մագնիսի պես քաշում էր նրան: Նա այստեղ զգում էր իրեն ինչպես հարազատների շրջանում: Սա մտքի և լուսավորության կենտրոն էր: Իսահակյանի համար գիրքը, մանավանդ հայատառ գիրքը, աշխարհի ամենասիրված բանն էր, իսկ կղզին ինքը յուրովի հուշարձան էր հայ գրքի: Մխիթարյանականները ոչ միայն հավաքել և պահպանել էին հին և հազվագյուտ գրքերի մի պատկառելի հավաքածու, այլև իրենց էին հանդիսանում հայ գրքի լավագույն թարգմանիչներն ու հրատարակիչները: Գիշեր ու զօր նրանք անդուլ ուսումնասիրողն ու պահապանն էին հայ դպրության:

Հենց Իսահակյանի Վենետիկ գտնված տարում (1901 թ.) նրանք հրատարակեցին Արիստակես Լաստիվերտցիի «Պատմություն Հայոց»-ը, Ղևոնդ Ալիշանի «Հայապատումի» փառահեղ հատորը, «Յովսէփ Գեղեցիկ»-ը, Թեոփրաստի «Նկարագիրը»-ը հայր Արսեն Բագրատունու թարգմանությամբ, հայր Ղևոնդ Ալիշանի աշխատասիրությամբ հրատարակվել էր «Հատը ի բանից և ի գրոց Մխիթարայ Աբբայի» վեհաշուք հատորը Մխիթար Սեբաստացու կյանքի և գործունեության վերաբերյալ: Մեկ տարի առաջ լույս էր տեսել ֆրանսիական պոեզիայի հատընտիրը՝ «Ճաշակ գաղղիական արդի բանաստեղծութեան» հայր Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ, լույս էին տեսնում «Բազմավեպ» և «Գեղունի» շքեղ ամսագրերի հերթական համարները: Հիրավի տոն էին Իսահակյանի համար այն ժամերը, որոնք անցնում էին Մխիթարյանների հարուստ գրադարանում: Այն գրքերը, որ լեզանդ էին իր համար, բանաստեղծը կարող էր ամենել իր ձեռքը, կարդալ ու անհագ կարդալ:

Սակայն ամենամեծ լեզանդը Ղևոնդ Ալիշանն էր: «Ղևոնդ Ալիշան» հուշապատումի մեջ Իսահակյանը պատմում է Նահապետի հետ ունեցած իր հանդիպումների մասին 1901 թ. գարնանը: Բանաստեղծը Պետերբուրգի հայ ուսանողների խմբակից նամակ է ստացել, խնդրանքով որոշ կենսագրական տեղեկություններ ամենել հայր Ալիշանից, ինչպես նաև իմանալ նրա կարծիքը «Հայկական հարցի» վերաբերյալ: Այս նյութերը տպագրվելու էին հիշյալ խմբակի ձեռնարկած «Անվանի հայերի կենսագրություններ» ժողովածուում:

«Այս նամակով զինված, զնացի Ալիշանի մոտ, - գրում է իր հուշերում Իսահակյանը: Ալիշանը հեզմանքով ասաց.

նամակները 1996 թ. առանձին գրքուկով հրատարակել է հայ գրականության միլիոյալ Մարտիրոս Մինասյանը, ԺՆԱ, 1996 թ., 78 էջ:

- Այդ ի՞նչ ծանր քար են դրած քո մեջքին: Վախեցա՞ր. գրելիք բան մը չկա: Ես կենսագրություն չունիմ:

Ասաց, որ իրեն 8-9 տարեկան հասակում Կ. Պոլսից բերել են Ս. Ղազար, նվիրել են վանքին: Սկսել է աշակերտել միաբանության դպրանոցում, ավարտել է շատ մատաղ տարիքում, ուսանող է եղել և մի քանի տարի էլ Փարիզի Մուրադյան հայ վարժարանում դասատու և վարիչ է եղել: Եվ քանի մը գրքեր են գրած: Ուրիշ ալ ըսելիք չունիմ: Գրքե-գիրք՝ այս է եղած իմ ծամփամ: Ուրիշ տեղեր չեմ գացած» (V, 11): Այսպիսին է հակիրճ պատմությունը այդ հսկա արարչի հսկա կյանքի: Ի՞նչ աստիճան համեստություն, սեփական անձը ստվերում պահելու անմախաղեպ մղում:

Պետերբուրգյան ուսանողների երկրորդ խնդրանքը կատարելն ավելի դժվար էր, քանի որ Ալիշանը պիտի հայտներ իր դիտարկումները դարասկզբում մոր հասակ ամենող «Հայոց հարցի» վերաբերյալ: Իսահակյանը իր հուշագրության էջերում ջանասիրաբար շարադրել է Ալիշանի ասածները և, ինչպես ինքն է գրել, «շարադրում են արևելահայ բարբառով»: Այստեղ ամբողջությամբ մեջ բերել կամ վերապատմել Ալիշանի մտքերը հարկ չկա, քանի որ Իսահակյանի երկերում դրանք բազմիցս տպագրվել են:

Ակնհայտ էր Ալիշանի ասածներից այն, որ հայ ժողովուրդը գիտակցելով, որ սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ստիպված եղավ հույսը դնել քրիստոնյա Եվրոպայի վրա, քաղաքակիրթ պետությունների օգնության, և դա եղավ մեր ժողովրդի մեծագույն սխալը:

Ալիշանը հիշում է, որ 1890-ական թթ. կոտորածների ժամանակ կարդինալ Թերզյանը գնում է Հռոմի պապի մոտ և խնդրում, որ նա դիմում անե մեծ պետություններին սաստելու ջարդարար թուրքին: Հռոմի պապը պատասխանում է. «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ» (V, 12):

Այդ շրջանում Ալիշանը համոզված էր, որ պետք է երես շուռ տալ եվրոպական պետություններից, դադարեցնել հայ հեղափոխական ընկերությունների գործունեությունը, «պետք չէ գրգռել թուրքերի մոնղոլական արյունը»: Ալիշանը ասում է Իսահակյանին, որ Պոլսո հայերի պատրիարք Սրբազան Օրմանյանը, լինելով փորձված քաղաքագետ, բարեկամական հարաբերություններ է մշակում սուլթան Աբդուլ Համիդի հետ. «Պետք է աջակցել նրան, մի բառով՝ պետք է համակերպվել, ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար» (V, 12-13):

Հիշենք, որ այս խոսքերը Ալիշանն ասում էր 1901 թ., մի ժամանակահատվածում, երբ զանգվածային ջարդերը դադարեցվել էին, և Նահապետին թվում էր, թե թուրքը կարող է կասեցնել իր հանցագործ ծրագրերը: Ինչ խոսք, որ նման տեսակետը, իսկ առավել ևս Օրմանյան պատրիարքի «հաշտվողա-

կան» քաղաքականությունը սկզբունքապես անընդունելի էին «Հայդուկի երգերի» հեղինակին:

Այլ էր նրանց գրույցի հաջորդ մասը, երբ Ղևոնդ Ալիշանը պատմում է ռուսական եկեղեցու սինոդի օբեր-պրոկուրոր, հայտնի սլավոնաֆիլ, իշխան Պոբեդոնոսցևի Սուրբ Ղազար կատարած այցելության մասին. «Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտի վրա են և քայլում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը... Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ժուռ մեծ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է.- Ես հիացած եմ ձեր աշխատանքի, համբերության և սիրո նկատմամբ՝ հանդեպ ձեր ազգի, բայց ցավում եմ, որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ: Որի՞ համար են այդ անձնագոհումները, մի փոքր ժողովրդի համար՝ ցրված երկրի երեսին և մատնված կորուստի: Թուրքիայում կոտորում են հայերիդ շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ ժուռ ժողովուրդների հետ դատապարտված են շուտ կամ ուշ ձուլվելու:

Բոլոր միաբանները սոսկացին, սակայն, աբբահայրը (իգմատիոս եպիսկոպոս Կյուրեղյան) հանդարտությամբ պատասխանում է.- Հայ ժողովուրդը շատ ավելի ահեղ ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար: Մեր հույսը աստծու վրա է, մեր ժողովրդի տոկոսնության և պատմության անհիմանալի ընթացքի վրա:

Բոլոր միաբանները անխոս հեռանում են դահլիճից, իսկ մեծանուն պաշտոնյան, քարտուղարի հետ միայնակ, գնում է նավամատույց» (V, 13):

Այսպես էլ ապրել է մեր ժողովուրդը, հիշելով իր հերոսական անցյալը, հիշելով, որ ավելի ծանր օրեր է ունեցել և անց է կացրել՝ հույսը դրած Աստծու և պատմության «անհիմանալի երթի» վրա:

Իրոք որ անհիմանալի ընթացք, եթե Ալիշանը իմանար, թե ինչ է սպասում իր ժողովրդին մեկ տասնամյակ անց:

Այսպես էին անցնում օրերը Վենետիկում: Վենետիկն իր առիթքնող գեղեցկությամբ գերել էր Իսահակյանին: Առաջին այցի շրջանից ուղևորական նոթեր կամ գրառումներ այս քաղաքի վերաբերյալ չեն պահպանվել, այդպիսիք շատ կլինեն «Հիշատակարանի» ուշ շրջանի գրառումներում, սակայն Վենետիկը աներկբաբայրեն մխրձվում էր բանաստեղծի գիտակցության մեջ, նրա ռոմանտիկ, գեղեցիկը պաշտող ու գնահատող էության մեջ: Վեպը այս քաղաքի հետ 1901 թվականին դեռ միայն ընձյուղներ էր արձակում, շարունակությունը լինելու էր տասնամյակներ անց...

Իսահակյանի Վենետիկում գտնվելու օրերին ժնկում 1901 թ. ապրիլին տեղի է ունենում ՀՅԴ հերթական համագումարը: Այդ մասին իմանում ենք Վենետիկում ստացած Իսահակյանի երկու բացիկներից: Մյունխենից Իսահակյան

նի երեք ընկերները՝ Միսաք Գյուրջյանը (այդ նրա հասցեն էր բանաստեղծը ճշել ժնկից հղած իր առաջին նամակում), Լևոն Հազարապետյանը (ապագայում էջմիածնի ձեմարանում նկարչության ուսուցիչ և Սրբուհի Լիսիցյանի ամուսինը) և Ս. Աղասյանը, շնորհավորում էին բանաստեղծին Չատիկի տոնի առթիվ:

Ս. Աղասյանը մասնավորապես գրում էր. «Սիրելի բանաստեղծ. Համագումարը վերջապես վերջացավ. մոտ 50 հոգի ներկա էին: Մեծ ծրագրեր կազմվեցան, բայց տեսնենք ինչ դուրս կուգա: Նամակ կը գրեմ» (15.IV, 1901) (ԱԽԸԱ):

Երկրորդ բացիկը Իսահակյանին հղել էր ժնկից Իսահակյանի և Ջավոյի համալսարանական ընկերուհին՝ Մաշուկը: Ինչպես երևում է, Իսահակյանը նրան գրած է եղել մի շարք նամակներ, որոնց Մաշուկը չի պատասխանել, և ահա այս կարճ բացիկը. «(25.04.1901) Խնդրում եմ մի քիչ էլ համբերիքի և մի բարկանա, եթե ես քո բոլոր նամակներիդ մինչև այժմ չեմ պատասխանում: Այս օրերս գործնական ջննդություն ունեմ... Առաջմս կասեմ, որ Ձեզ չեմ մոռանում, մանավանդ երբ Ջավոյին տեսնում եմ, միշտ միտս ես գալիս: Ափսոս համագումարը չեկաք! Երբ պիտի գաք ժնկ. Մաշուկ» (ԱԽԸԱ): Մաշուկը մի այլ նամակով Իսահակյանին գրում է, որ հանդիպում է ունեցել Քրիստափոր Միքայելյանի հետ: Համագումարը կազմակերպչական դեր է ունեցել, ըստ երևույթին կազմակերպելու համար ՀՅԴ III Ընդհանուր ժողովը, քանի որ II Ընդհանուր ժողովից, որը տեղի է ունեցել 1898 թ. Թիֆլիսում, անցել էր երեք տարի և կարևոր հարցեր էին կուտակվել, որոնք դրվել են ջննարկման: Իսահակյանը Վիեննայի համագումարին չի մասնակցել, քանի որ հրավիրված չէր, և այդ ժամանակ նա գտնվում էր Վենետիկում: Ինչ խոսք, եթե անհրաժեշտությունը լիներ, Իսահակյանը իր մասնակցությունը բերած կլիներ հիշյալ հավաքին:

Սուրբ Ղազարի ձեռագրատունը և գրադարանը հազվագյուտ հնարավորություն էին ընձեռել Իսահակյանին աշխատելու, ծանոթանալու այն մեծ գրական ժառանգության հետ, որ ստեղծել էին Մխիթարյան հայրերը, նրա առջև նաև հայոց բազմադարյան մամուլի պարբերականներն էին: Իսահակյանը երբևիցե նման հարուստ հայագիտական կենտրոնում չէր պարապել, ուստի աշխատում է այդ գարնան ամիսները ամբողջապես հատկացնել Սուրբ Ղազարում պահպանվող գանձերի ուսումնասիրմանը: Այստեղ նա կարող էր ծանոթանալ նաև Հայոց հարցի վերաբերյալ բազմաթիվ վավերագրերի:

Առանձնապես մոտիկ հարաբերություններ են ստեղծվում բանաստեղծի և միաբանության ծանաչված հայագետներ հայր Հակոբոս Տաշյանի (Վիեննայի միաբան) և հայր Արսեն Ղազիկյանի միջև: Վերջինս հիրավի հայ լավագույն թարգմանիչներից է, որ գերազանց կերպով թարգմանել է Վերգիլիոս,

սուրա...» (թվագրված՝ «Մայիսի 26, Լիդո (Վենետիկ), որն առնչվում է Իսահակ-
յանի մտորումներին՝ կապված «Տիեզերական զանգի» խորհրդանշի հետ:
Իսկ երկրորդն ստեղծված էր Ադրիատիկի ծովախորշի ամնիջական ազդեցու-
թյան տակ: 1898 թ. ի վեր բանաստեղծը ծով չէր տեսել, մինչդեռ ծովի պատկերը
մշտապես հուզել է նրա ռոմանտիկ խառնվածքը. հիշենք Օդեսայում գրված
բանաստեղծությունները (1898 թ.): Այս երկի մեջ նույնպես ծովի ալեկոծ,
անհանգիստ կերպարը նա փորձում է նույնացնել իր ծակատագրի հետ.

...Եվ ո՛ւշ գիշերին հոգնած մի ալիք
Լացով, հառաչով եկավ ու ընկավ
Գիրկը մայր-երկրի...
Ա՛խ, ծակատու հոգնած ո՞վ շոյե պիտի.
Եվ ո՞ւմ սիրտն է բաց - այս հեռո՛ւ, օտա՛ր
Ափում ինձ համար...
(1901, Հունիս 2, Վենետիկ)

Վենենայի Մխիթարյան միաբանության Ձեռագրերի դիվանում պահպան-
վում է Վենետիկից հայր Բառնաբաս Պիլեզիկձյանին գրած Իսահակյանի երկ-
րորդ նամակը.

«8-ին Ապրիլի 901, Վենետիկ.
Հարգելի Հայր Սուրբ.

Է՛, վալլա՛, շատ շնորհակալ եմ. փողը, թեև քիչ էր, բայց լավ ժամանա-
կին հասավ: Այստեղ օրերը սքանչելի են, կապու՛յտ, կապու՛յտ երկինք ու ծով,
անուշ արև, և ծոխ բուսականություն. առ այժմ տրամադրությունս լավ է, տես-
նեմ հետո ինչ կլինի:

Շնորհավորում եմ Ձեր Ձատիկը. երեկ Ս. Ղազար էի. լավ անցավ. Հ. Ալի-
շանը հիվանդ էր, հիմա լավ է, զարմանալի ուժեղ ոգու տեր մարդ է. զարմանա-
լի մարդ է. հիացած եմ իրենով: Է՛ ի՞նչ գրեմ, առ այժմ այսքանս...

Ավետիք Իսահակյան»¹:

Ուրեմն Ձատիկը բանաստեղծը անց է կացրել Ս. Ղազար կղզում, հոտն-
կայս լսել մինչև ուշ գիշեր աշտարակավոր եկեղեցում Քրիստոսի Հարության
ամբիվ տրվող պատարագը, իսկ հետո սեղան նստել միաբանության հայրերի
հետ. հիրավի անմոռաց մի օր հավատով շենշող այդ մարգարտանման կղզյա-
կում:

Երբ դեռ կենդանի էր հայության ոգու խորհրդանիշ Հայր Ղևոնդ Ալիշանը:
Ավաղ, սա պիտի լիներ իր կյանքի վերջին Ձատիկը:

¹ Ինքնագիրը պահպանվում է՝ Վենենա, Մխիթարյան միաբանության Ձեռագրատան
նամակագրությունների դիվան:

Իսահակյանը մնաց Վենետիկ մոտ երեք ամիս և, որ զարմանալի է, հասցրեց մինչև իսկ հազգեմալ նրանով: Այս զգացումը նրան նույն այս քաղաքում կապշարի թերևս քառորդ դար անց (ինչի մասին վկայում են նրա մամակաները): Եվ ինչքան էլ դա զարմանալի է, բայց դա փաստ է: Ահա նա գրում է Վենետիկից ժնև, իր հավատարիմ ընկերուհուն՝ Ջավահիր Ներսիսյանին. «(1901, հունիսի 6) Արդեն Վենեցիա ինձ ամեն մի ժամ մնալը բանտի պես տաժանելի է. և՛ շոգ է, և՛ չափազանց մռայլ են, և՛ էլ չեն լողանում (ջուրը տաք է, վատ է ներգործում ջրերիս վերա),- բայց փողի եմ սպասում ու չեմ ստանում, ստացած օրը հենց դուրս կգամ: Եթե չհասա ամսավերջին՝ դու գնա՛... կամ եթե շոգից չես վախենում՝ Վենեցիայով արի... (Բայց Աստված ոչ անե ես մինչև ամսվա վերջը մնամ. շոգուց կխելժիմ): Իմ դրությունը այժմ, քան երբևիցե, անորոշ է, կրիտիկական և հուսահատ. ես նկատում եմ, որ կատարյալ հերոս եմ - դիմա-նալու, համբերելու...» (VI, 34-35):

1901 թվականը Վենետիկի համար հոբելյանական տարի էր, տոնում էին միաբանության հիմնադրման 200-ամյակը:

Տասնչորս ամիս էր արդեն, որ Իսահակյանը դուրս էր եկել հայրենիքից: Բնական է, նրան սկսել էր տանջել և՛ կարոտը, և՛ պարզապես իր հարազատների, իր գրասեղանին մոտ լինելու պահանջը: Եվ թեև Իսահակյանը ծրագրել էր գնալ Արևելք՝ Պաղեստին, Երուսաղեմ՝ «պիտի Հիսուսի ման եկած վայրերը շրջեն», սակայն նրա այդ իղձը ենթակա չէր կատարման, և ինքը որոշում է Վենետիկից հետո բռնել տուրքարժի ժամփամ: Եվ ինչքան էլ որ շրջագայություն-ստանառությունը երկար տևեց, բայց Եվրոպան այդպես էլ չպիտի կարողանար ռոմանտիկ բանաստեղծին իր գիրկն առնել, կտրել հարազատ արմատներից:

Վենետիկն իր աներևակայելի գեղեցկությամբ գերել էր նրան: Հիրավի առաջին անգամ էր օտար ավիդ նրա համար այսքան սիրելի և դյուբիչ, բայց և այնպես նա փափագում էր օր առաջ տուն հասնել: Մոտենում էր հրաժեշտի պահը. «Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ առնելու: Օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին:

- Ինձնեն հարյուր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի, հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...» (VI, 14): Ի՞նչ պարզ ու հիմնալի բառեր: Որոնք նույնությամբ, մի երկու ամիս

1 Իսահակյանը «Հիշատակարանում» միշտ և միշտ Ալիշանի այս խոսքերի գրառումն է արել. «1901, Նոյեմբեր, Ալեքսանդրապոլ. Կրաֆտ-Էրինգն ասում է, որ մեծ մարդիկ ուշ են ծերանում:- Հայրիկի մասին: Հ. Ալիշանը նրա՝ «Հայրիկի» մասին ինձ միշտ ասում էր Վենետիկում. «Անիկա ինձնեն 100 օր մեծ է, բայց անիկա շատ առողջ է, ձի կհեծնի, կըսեն անիկա Հայաստանի օդն է շնչեր, ջուրն է խմեր. անիկա հայոց լեռներու օդն է շնչել ու Մասիսի շուրփն տակ կքնանա» («., 280):

անց, բանաստեղծը պիտի տեղ հասցներ Խրիմյան Հայրիկին:

Իսահակյանն անշուշտ գիտակցում էր, որ սա իր վերջին հանդիպումն էր մեծ հայի հետ, և նա ծակատագրից շնորհակալ էր, որ իրեն բախտ էր վիճակվել ծանոթանալ նրա հետ, լսել նրա իմաստուն զրույցները: Փոքր-ինչ առաջ անցնելով, ասենք, որ հայ բանաստեղծության նահապետի մահվան բոթը Իսահակյանն առավ նոյեմբերի կեսերին հայրենի Ալեքսանդրապոլում (Ալիշանը մահացել է 1901 թ. նոյեմբերի 9 (22), Ս. Ղազար կղզում), նա ներկա է եղել Ալեքսանդրապոլում Ղ. Ալիշանի հոգեհանգստի արարողությանը և այդ մասին գրել է իր «Հիշատակարանում»։ «Կատարեցին հայ կաթոլիկների եկեղեցում հ. Ալիշանի համար հոգեհանգիստ: Կաթոլիկների վարդապետ Պ. Նահապետյանը խոսեց՝ «Գիտեք, ժողովրդյանք, սա ի՞նչ նշանակություն է, - ցույց տալով հոգեհանգստի դագաղը, - սա հայր Ղևոնդի հոգեհանգստությունն է. ո՞վ էր հայր Ղևոնդ, Մխիթարյան ուխտի քահանա էր, որ 40 տարի աչք կոճեր, գրիչ կշարժեր ազգի համար. անթիվ գիտական ու հոգևոր գրքեր գրեց, հիմի նա մեռավ, լռեց Ավարայրի բլրուլը...»: Իսահակյանը մանրամասնորեն վերապատմում է այդ արարողությունը և նույնիսկ նկատում. «Ներկա էր պ. քաղաքագլուխը, անդամներից քաղ. վարչության, երիտասարդներ ու տիկիներ, չկար ո՛չ մի հայ լուսավորչական հոգևորական» (<, 279, 280):

Իսկ տարեվերջին նա Ալեքսանդրապոլում ստանում է Վենետիկից հայր Եսայի վարդապետ Տայեցիի նամակը, ուր մանրամասն պատմվում է հայր Ալիշանի մահվան մասին.

«29 դեկտ. 1901. Վենետիկ, Ս. Ղազար.

...Մեր մասին Ձեր հայտնած համակրանքն և գովասանքներն ուրիշներուն առջև, անտարակույս ազնվական սրտի արգասիք են, որովհետև մենք այնպես համոզված ենք՝ որ չունենք բան մը՝ որով կարենանք պարծել. մի՛ համարիք իմ այս խոսքս սնափառիկ խոնարհության ըսվածք մը, ոչ՝ իրապես այսպես է, մեր միակ նպատակն է գնալ այն ուղին որ գծեց ինքն Մխիթար, և գործել այն նպատակով ինչ նպատակով որ Մեծն Մխիթար հիմնեց յուր այս Միաբանությունը, որ է ըսել մարդկության, կամ լավ ևս լռել Ազգին բարվույն և օգտին ծառայել:

Կարդացի Ձեր գրած զգայուն տողերը Ալիշանի մահվան առթիվ, որոնք վերստին պատկերեցին մտացու և հոգվույս մեջ, դեռ թարմ և արտասուքս ողողլալ տխուր հուշեր. ո՛հ, ի՞նչ դաժնակսկիծ գիշեր էր այն գիշերը. տխուր և շատ տխուր. եթե միակ մխիթարություն մը ունեցա այն մեծ և վսեմ, սուրբ և պաշտելի Նահապետին մահվան օրն, այս էր որ գիշերն ի լույս անքուն անցնելով նորա սենեկին մեջ, բաղդ ունեցա յուր վերջին շունչը բազկացու մեջ ավանդելու. և որպիսի բաղդ» (ԱԽԸԱ):

Հայրենիք նոր վերադարձած բանաստեղծը խորապես ազդվել էր պաշտե-

լի Նահապետի մահվան բոթն առնելով: Մտովի նա նորից Վենետիկ էր՝ հայր Ալիշանի նվիրական խցում և հիշում էր, թե Նահապետը ինչպես փորձեց իրեն սուրճ հյուրասիրել, այնքան պարզ, այնքան մարդկային. «Ալիշանը ժպտում է մեղմակի, ապա հարցնում է՝ ի՞նչ եմ ուսանում, ինչքա՛ն պիտի մնամ Վենետիկ:

- Ես կրնամ ձեզի սուրճ հրամցնել. վարդապետ, գնա՛ մեզի համար սուրճ ապսպրե:

Ես շնորհակալ լինելով, հրաժարվում եմ սուրճից:

- Սակայն դու՛ն գնա՛,- ասում է Ալիշանը:- Կովկասի հայերը սուրճ չեն սիրեր. դուք թեյ կսիրեք: Ասկե շատ տարիներ առաջ պարոն Միսնսարովը, հայտնի ազգային մը... Պետերբուրգեն այցի էր եկած վանքը ու ինձի սամովար մը նվեր բերած էր. ըսավ ինձի - Վարդապետ, թեյ խմել սովորե, աշխատանքի ժամանակ աղել է: Զգործածեցի, հոն կմնա վանքի մեկ անկյունին մեջ» (V, 9-10):

Եվ, անշուշտ բանաստեղծը վերհիշել է և Հայոց մեծն Կաթողիկոսի՝ Խրիմյան Հայրիկի խոսքերը Ալիշանի մասին, երբ ինքը անձամբ տեսնվել էր հետը էջմիածնում և հաղորդել Ալիշանի «կարոտագին ողջույնը». «Ան կնախանձե ինձ, ես վաղը կկարգադրեմ, որ ամոր Մասիսի հողեն, Երասխի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը դրկեն Վենետիկ: Ինչպես հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչև հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված է եղել» (V, 16):